



# ԼՈՅՍ

ԿՐՈՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԵՅԻՆ  
ՊԵՃՏՈՆԵԿԱՆ ԵՌԵՄՅԵԱՅ ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹԻՒՆ  
ԳԱՆՏՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՌԵՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ



**LUYS** — Revue trimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- |  |                       |
|--|-----------------------|
| Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՆԹԻԻ ՎԵՐ. դոկտ. Վահան Թութիկեան |                       |
| ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ  | Գրիգոր Հոթոյեան       |
| ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ...                          | Զարեհ Արք. Ազնաւորեան |
| ՀԱԽԱՏՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ                                  | Սիփան Ա. քհնյ. Մխսեան |
| ՅԻՍՈՒՍ ԵՒ ՆԻԿՈԴԵՄՈՍ                                  | ՎԵՐ. Ժիրայր Պզտիկեան  |
| ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ  | Յակոբ Արք. Գլնճեան    |
| ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ                      | Գառնիկ Ք. Գ.          |
| ՀՈԳԵՒՈՐ ԿԱՅԱՆՆԵՐ                                     | Կարօ Նոխստեան         |
| ԱԹԱՐՀԻ ԾԱՆՕԹ ՏՈՄԱՐՆԵՐԸ                               | Ա. Տէր Խաչատրեան      |
| ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՄԷՋ               | Ն. Արք. Ծովակաճ       |
| ԴԻԻԱՊԱՏՈՒՄ   | Յակոբ Արք. Գլնճեան    |
| ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ  |                       |
| «Յօդուածներու Ժողովածոյ» Բ. հտր.                     | Գ.Ք.                  |
| «Unity, Liberty and Charity / մտորումներ»,           |                       |
| «Քեմանչիստ Ռուբէնի յուշերը», եւ                      |                       |
| «Անցեալի յուշերով կ'ապրինք»                          | Բարզէն Թօփճեան        |

# ԱՍՏՈՒԱԾԱՀԱՃՈՅ ԸՆԱՐԺԱՌԻԹԻ ՄԸ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Սուրբ Թարգմանչաց Տօնին Առթիւ)

Տարակոյս չկայ, թէ Մեսրոպ Մաշտոց հայ ազգի ամենէն արժէքաւոր եւ ամենէն սիրուած անձերէն մէկն է: Ան իր հնարած հայերէն տառերու գիւտով հայ ազգը բարձրացուց ազգային գիր եւ գրականութիւն ունեցող ժողովուրդներու մակարդակին: Իր քանդակած 36 գիրերու հզօր լծակով ան յեղաշրջեց հայ ժողովուրդի ճակատագիրը, ամրակուռ կամուրջ մը հաստատելով մեր ազգի կորուստի անդունդին վրայէն դէպի վերապրում:

Այս ինքնապարտադիր եզրակացութեան կը հանգինք, մանաւանդ երբ առարկայականօրէն կը դիտենք մեր դարաւոր պատմութիւնը: Յստակօրէն կը տեսնենք, որ մենք ազգովին՝ մեր քաղաքական անկախութիւնը չենք կրցած պահել երկու հարիւր տարիէ աւելի, բայց հինգերորդ դարէն ի վեր, պատմութեան ասեղ փոթորիկներուն մէջ, կրցած ենք պահել մեր մշակութային անկախութիւնը՝ շնորհիւ մեր ինքնապաշտպանութեան այն հզօր ամրոցին, որ կը կոչուի հայկական այբուբեն: Արդարեւ, 404ին ստեղծուած ու 406ին կատարելագործուած՝ մեր 36 գիրերը՝ հայ ազգին տուին ինքնութիւն, գատորոշելով զայն տարբեր մշակոյթներէ:

Ինչո՞ւ եւ ի՞նչ պարագաներու ներքեւ հնարուեցան հայ նշանագիրերը: Հայկական այբուբենի գիւտէն դար մը առաջ, հայ ազգը ընդունած էր քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն, սակայն դեռ հայ ազգը չէր լուսաւորուած հոգեւորապէս: Քրիստոնէութիւնը խոր արմատներ չէր նետած հայութեան սրտին ու հոգիին մէջ: Եւ ինչպէ՞ս զօրանար Քրիստոնէութիւնը առանց հայաբարբառ Աստուածաշունչի, առանց թափանցելու Քրիստոսի բերած լոյս հաւատքին: Աստուածաշունչի ընթերցումն ու եկեղեցական արարողութիւնները կը կատարուէին ասորերէն կամ յունարէն լեզուներով եւ հայ ժողովուրդին մեծամասնութիւնը չէր հասկնար այս երկու լեզուները: Հայ եկեղեցականները ստիպուած էին՝ Սուրբ Գրային եւ այլ ընթերցումները բերանացի թարգմանելու ժողովուրդին, հայերէն լեզուով: Այս թարգմանիչ կղերները կը կոչուէին «վերձանող»ներ: Այսպէս կոչուած վերձանողները դժուարութիւն ունէին Քրիստոսի Աւետարանի Լոյսը ազգուօրէն տարածելու:

Իրագեկ՝ տիրող կացութեան, հայ եկեղեցւոյ առաջնորդութիւնը, յատկապէս Սահակ Պարթեւ կաթողիկոս ու Մեսրոպ Մաշտոց վարդապետը խորապէս կը տագնապէին եւ լրջօրէն կը մտածէին լուծում մը գտնել: Անոնք նուիրուած քրիստոնեաներ էին ու ճշմարիտ աւետարանիչներ: Անոնք քաջատեղեակ էին Աւետարանի ճշմարտութեան, թէ՛

«Հաւատքը լսելէն կուգայ եւ լսելը՝ Աստուծոյ խօսքէն»: Ուրեմն, Աստուծոյ խօսքը մատչելի դառնալու էր ժողովուրդին, որպէսզի լսելով ու գայն կարդալով կարենային զօրացնել իրենց հաւատքը եւ ապա տարածել ամէնուն:

Այդ առաջադրութեամբ էր, որ հայ եկեղեցւոյ առաջնորդներու նախաձեռնութեամբ, Վաղարշապատ մայրաքաղաքին մէջ կարեւոր ժողով մը գումարուեցաւ, նախագահութեամբ Վաւաշապուհ թագաւորին: Ուրոյն հայ գիրեր պէտք էր յօրինուէին հայ լեզուին համար: Այդ դժուարին բայց վսեմ գործը գլուխ հանելու պարտականութիւնը ինկաւ Մեսրոպ Մաշտոց վարդապետին վրայ, որ երկար պրպտումներէ եւ հետազօտութիւններ ընելէ ետք, 406 թուականին յաջողեցաւ վերջնականապէս կազմել ու ձեւաւորել 36 գիրերով հայկական այբուբենը, որ լիովին կը գոհացնէր հայերէն լեզուի հնչիւնական պահանջները:

Այբուբենի գիւտէն ետք, հայ թարգմանիչները, որոնք լիովին տիրապետած էին ասորերէն եւ յունարէն լեզուներուն ու սկսած էին հմտանալ հայերէն լեզուին, զրկուեցան այդ ժամանակի նշանաւոր մշակութային եւ կրօնական կեդրոնները, որպէսզի հայոց համար անհրաժեշտ մագաղաթները թարգմանեն ու Հայաստան բերեն:

Առաջին գիրքը, որ թարգմանուեցաւ՝ Աստուածաշունչն էր: Ընտրանի թարգմանիչներու խումբ մը յաջողեցան «փութանակի» (հասկնալով կղած) Աստուածաշունչի թարգմանութիւնը ընել 408-415 թուականներուն, որ հիմնուած էր յունարէն Եօթանասից եւ ասորերէն Փէշիթայի թարգմանութեանց վրայ: Ատկէ ետք, Սահակ Պարթեւ կաթողիկոս եւ Եզնիկ Կողբացի ստանձնեցին Աստուածաշունչի փութանակի թարգմանութեան սրբազրութեան ու նոր թարգմանութեան մը, հիմնուած Եօթանասից յունարէն թարգմանութեան վրայ, որ ամբողջացաւ 435ին: Այս նոր թարգմանութիւնը դարձաւ օրինական թարգմանութիւնը, որ հետագային պիտի կոչուէր «Թագուհի Թարգմանութեանց»:

Աստուածաշունչի թարգմանութենէն ետք, թարգմանիչները թարգմանեցին աղօթքներ, քարոզներ, ճառեր, մեկնաբանական, դաւանաբանական, հայրաբանական, ջատագովական եւ վկայաբանական երկեր:

Անոնք ձեռնարկեցին նաեւ աշխարհիկ գործերու թարգմանութեան: Այսպէս, անոնք թարգմանեցին իմաստասիրական, ճարտասանական ու քերականական գործեր: Այս ձեւով անոնք հայ ժողովուրդը հաղորդակից դարձուցին այդ օրերու քաղաքակիրթ աշխարհին:

Այսպէս, մեր հինգերորդ դարու թարգմանիչները հիմը դրին հայ գրական մշակոյթի տարբեր եւ ալլազան սեռերուն (ժանրերուն): Թարգմանութիւններու միջոցով, Մեսրոպի աշակերտները սորվեցան մշակել գրական նմանօրինակ սեռեր, հայերէնով ու բնագիր: Օրինակ, Կորիւն մշակեց կենսագրական սեռը եւ գրեց «Վարդ Մաշտոց»ը, որ իր ուսուցչի կեանքին մասին միակ աղբիւրն է, որ ունինք: Եղիշէ մշակեց բանաս-

տեղծական սեռը իր «Վասն Վարդանանց եւ Հայոց Պատերազմին» երկով եւ անմահացուց Աւարայրի հերոս Քաջն Վարդանը: Եզնիկ Կողբացին գարգացուց դաւանաբանական ու ջատագովական սեռը իր «Եղծ Աղանդոց» աստուածաբանական գործով: Մովսէս Խորենացին մշակեց պատմագրութեան սեռը, հայ ժողովուրդին ընծայելով իր «Պատմութիւն Հայոց» երկը, որուն շնորհիւ ան տիրացաւ «Հայոց Պատմահայր» սքանչելի տիտղոսին:

Հայ գիրերու գիւտէն մինչեւ Վարդանանց Պատերազմը, 406–451ի շրջանը՝ «Ոսկեդար» կոչուածով նուիրագործուած է հայոց պատմութեան մէջ: Արդարեւ, այս քառասունհինգամեայ ժամանակամիջոցին մէջ, հայ նշանագիրներու գիւտը, Աստուածաշունչի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնները եւ վերջապէս թարգմանիչներու այլազան գործերը՝ թարգմանածոյ թէ ինքնագիր, հարուստ վաստակով մը օժտեց հայ մտքի պատմութիւնը: Այս գործերը նաեւ ճակատագրական նշանակութիւն ունեցան մեր լեզուի ապագայ կառոյցին ու շարահիւստութեան մէջ:

Այս ամէնը նշելէ ետք, կ'ուզենք ընել հետեւեալ կարեւոր հաստատումը, որ հայ գիրերու գիւտը՝ աստուածահաճոյ շարժառիթի մը արդիւնքն էր: Մեսրոպ Մաշտոցի տեսիլքն էր՝ քրիստոնէութիւնը ամբողջով Հայաստանի մէջ, լուսաւորել բովանդակ հայոց աշխարհը, զօրացնել հայ եկեղեցին եւ անոր միջոցով զօրացնել հայ ազգը, որուն գոյամարտը օրհասական հանգրուանի մը հասեր էր: Տարօն գաւառի Հացեկաց գիւղի այս համեստ, բայց տիտան սուրբը, իր ամբողջ էութեամբ նուիրուած էր Քրիստոսի դատին: Ան խորապէս կը հաւատար Քրիստոսի պատգամին. «Բայց նախ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը եւ այդ բոլոր բաներն ալ պիտ տրուին ձեզի» (Մատթ. 6.33): Մաշտոց համոզուած էր, որ իր ու բոլոր ճշմարիտ քրիստոնեաներու կոչումն է՝ Աստուծոյ թագաւորութեան հպատակ ըլլալ, Անոր կամքը հայցել ու կատարել: Այդ էր նաեւ կոչումը՝ քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն հռչակող Հայաստանի համար: Այդ ընելով էր, որ Աստուած իր շնորհներով եւ պարգեւներով պիտի ողողէր Հայաստան աշխարհը:

Աստուծոյ խոստումը կատարուեցաւ: Մեսրոպի աստուածահաճոյ շարժառիթը իր հոյակապ հետեւանքները ունեցաւ: Հայաստան աշխարհ օժտուեցաւ իր ուրոյն այբուբենով, Աստուածաշունչը հայերէնի թարգմանուեցաւ, հայկական դպրոցներ հիմնուեցան, Հայ եկեղեցին անկախացաւ, հայկական մատենագրութիւնը ծաղկեցաւ, հայերէն լեզուն բարձրացաւ, հայուն հոգեւոր ու մտաւոր հորիզոնը ընդարձակուեցաւ:

Ազնուական տեսիլքի մը եւ շարժառիթի մը օրհնութիւնները, բացառիկ անկիւնադարձ մը ստեղծեցին հայոց պատմութեան մէջ: Իր աստուածատուր գիրերու գիւտին հրավառ ջահով, Սուրբ Մեսրոպ լուսաւորեց Հայաստան աշխարհի երկինքը: Քաջալերուած հայ ազգի հո-

գեւոր ու մշակութային լուսաւորութենէն, Մեսրոպ՝ իր խումբ մը աշակերտներով ճամբորդեց Վրաստան եւ աղուաններու երկիրը եւ հոն բնակող ժողովուրդներուն քարոզեց Քրիստոսի սիրոյ եւ փրկութեան Աւետարանը եւ հաստատեց քրիստոնէական դաստիարակութեան կեդրոններ: Վերջապէս, Աստուծոյ այս ընտիր ծառան, ո՛չ միայն իր ազգին, այլ նաեւ դրացի ազգերուն ալ օրհնութեան միջոց մը դարձաւ:

Երբ այսօր ետ կը նայինք մեր անցեալ պատմութեան, կը տեսնենք, թէ մենք հոյակապ ժառանգութեան մը օրհնեալ ժառանգորդներն ենք: Հարցը այն է, թէ ի՞նչ տեսակ ժառանգորդներ ենք: Փոխանցուած հարուստ ժառանգութիւնը մսխող, փճացնող, թէ՞ այդ ժառանգութիւնը պահող, ճոխացնող ու զալիք սերունդներուն աւանդ ձգող պատասխանատու տնտեսներ:

Վեր. Դոկտ. Վահան Թութիկեան



# ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ

Կանգուն կը մնաս, որպէս ատրուշան,  
Հայ ժողովուրդի կամքով անսասան,  
Որպէս անառիկ բե՛րդ հայոց լեզուին,  
Որպէս դարբնետո՛ւն հայոց հոգիին:

Ես քեզ կը սիրեմ այնպիսի՛ սիրով,  
Ինչպէս սիրած եմ մայրս հոգեթով,  
Ես քեզ կը պաշտեմ այնքա՛ն հաւատքով,  
Որքան պաշտած եմ ազգս իմ կեանքով:

Դո՛ւն հայ ոգիի վսեմ Արարա՛տ,  
Հայկէն արձակուած մարտագոռ գեղարդ,  
Սահակ- Մեսրոպի հանճարով վառած,  
Լուսաբաշխ կանթե՛ղ, անմահութեան կա՛յծ:

Դո՛ւն արեւածին լոյսի սուրբ խորա՛ն,  
Հայ գոյամարտի պողպատեայ Վահա՛ն,  
Ինքնաճանաչման սրտագին մատեան,  
Ազատութեան տենչ, յոյսի շատրուա՛ն:

Դո՛ւն հայակերտման հնո՛ց մշտավառ,  
Հայ մշակոյթի աւի՛շ կենարար,  
Թարգմանչաց թափած քրտինքով արդար,  
Հայոց պատմութեան բացիւր ոսկեղա՛ր:

Դո՛ւ հայ հոգիի աղօթք երկնահաս,  
Հայրենաբաղձ տա՛ղ, պանդուխտի երա՛ղ,  
Գիտութեան ամրո՛ց, իմաստութեան ջահ,  
Ազգային փառքի յաւերժական գա՛հ:

Դո՛ւն հայ հաւատքի շքեղ շարակա՛ն,  
Քուչակեան քառեակ, ե՛րդ կոմիտասեան,  
Դարերը ճեղքած հասած այս օրուան,  
Մի՛շտ կանգուն մնաս Դպրոց Հայկական:

Գրիգոր Հոթոյեան

# ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ՀԻՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Թէեւ տարօրինակ կը թուի, եւ սակայն ճշմարիտ է՝ թէ ներկայ աշխարհին մէջ, որքան կը խորանան կարգ մը գիտութիւններ, այնքան աւելի կը պակսի դաստիարակելու մտահոգութիւնը: Եւ ատիկա՝ հակառակ այն երեւոյթին, որ մանկավարժութեան ու դաստիարակչական հոգեբանութեան մասին նորանոր տեսութիւններ հրապարակ կուգան ամէն տարի...:

Դպրոց, ուսում, կրթութիւն: Դպրոցը յարկ մըն է սոսկ, առաւել կամ նուազ ջերմ, ժամանակաւոր հանգամանք ունի կեանքի մէջ: Ուսումը միջոց մըն է միայն, օժանդակ գործիք մը՝ մարդուն համար, զէնք մը՝ ինքզինքը հաստատելու: Իսկ դպրոցին եւ ուսման նպատակն է՝ կրթութիւնը, դաստիարակութիւնը: Ինչո՞ւ: Պարզապէս՝ որովհետեւ անոնք հիմնական դեր մը կը կատարեն. մարդուն նկարագրին, վարքագծին կերտումը, անոր մտաւոր եւ հոգեւոր կազմաւորումը:

Մարդը ընկերային էակ մըն է: Մանուկը կամ երիտասարդը՝ հաւաքականութեան մէջ պիտի ապրին եւ դեր վերցնեն: Հետեւաբար պէտք է ոչ միայն սորվին ու ճանչնան բնութիւնը եւ անոր կանոնները, այլեւ անցնին բանականութեան եւ իմացական օրէնքներու գիտութեան: Ոչ միայն գիտնան լեզուներ՝ հաց ու դիրք վաստակելու համար, այլ գործածեն զանոնք որպէս մարդոց հետ յարաբերելու անհրաժեշտ կամուրջ: Չնկատեն պատմութիւնը իբր զէպքերու հաւաքածոյ, հապա՝ ընկերային շրջապատի եւ պայմաններու ծանօթութիւն, նոյն ինքն մարդուն հանդէպ խոր հետաքրքրութեան արտայայտութիւն: Ոչ միայն խորանան հաշուադիտութեան, թիւերու աշխարհին մէջ, այլեւ հասնին հաշիւներէն խոսափող զգացական տիեզերքին խորքը: Չբաւականանան քիմիական նիւթերու իրարու վրայ կատարած ներգործութիւնները փորձարկելով, հապա ուսանին սիրոյ մասին եւ փորձեն ճանչնալ անոր փոխակերպ ազդեցութիւնը մարդուն կեանքին վրայ: Ոչ միայն տիեզերբանութիւն սորվին եւ որոնեն երեւելի աշխարհին գաղտնիքները, այլեւ փոխան թէ փոքրիկ մարդուն մէջ պարփակուած է ներքին հսկայ տիեզերք մը, եւ որոնեն հոգիին խոր գաղտնիքները: Այլ խօսքով, դաստիարակութիւնը՝ երկրորդ, բարձրագոյն մակարդակն է «ուսման», սակայն դասաւանդուած նիւթերէն կախում չունի անմիջականօրէն:

...

Դաստիարակութիւնը պարզ եւ դիւրին գործ մը չէ, անշուշտ: Զանազան հանգամանքներ դեր կը խաղան անոր մէջ, եւ բազմաթիւ երեսներ ունի անիկա: Մեր նպատակը անոր ընդհանուր հարցերը եւ ուղղութիւնները քննարկել է: Սակայն կ'ուզենք ուսումնասիրել մարդկային

եւ քրիստոնէական առողջ դաստիարակութեան մը հիմը կազմող ՀՆԱ-  
ԶԱՆ ԴՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ: Եւ սկիզբէն իսկ դիտել տանք, թէ մեր  
ըսելիքը կապուած է այնքան դպրոցին, որքան ուղղակիօրէն ծնողնե-  
րուն, հետեւաբար՝ ընտանեկան դաստիարակութեան:

Ծնողներ բնաւ պէտք է մոռնան մէկ բան, թէ իրենց զաւկին  
դաստիարակը ոչ դպրոցն է, ոչ ուսուցիչը եւ ոչ ալ հոգեւոր հովիւը, այլ  
իրենք իսկ: Անոնք կրնան օժանդակ ըլլալ պարզապէս, իրենք կը մնան  
տիրականը: Ոեւէ զաւակի դաստիարակը ծնողին է: Միշտ ալ այժմէա-  
կան է անոնց ուշադրութեան բերուած դաստիարակչական սա ուղեգի-  
ծը. «Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որպէսզի իր ծերութեան  
ատենն ալ չխտորի անկէ». – Առակ. ԻԲ. 6: Բայց ի՞նչ ձեւով վարուելու  
է զաւակներուն հետ՝ զանոնք կրթելու համար: Աստուածաշունչին պա-  
տասխանն է՝ հնազանդութեան մէջ, Աստուծոյ գիտութեամբ եւ իմաս-  
տութեամբ: Մարդկային առողջ ընտանիքի եւ ընկերութեան հիմն է այս  
տիպի դաստիարակութիւնը, հաստատուած սիրոյ ու յարգանքի  
սկզբունքին վրայ: Առանց յարգանքի՝ չկայ հնազանդութիւն, եւ հակա-  
դարձաբար, հոն ուր կը պակսի վերջինը, անպայմանօրէն բացակայ է  
առաջինը:

Ինչո՞ւ կարեւոր են յարգանքն ու հնազանդութիւնը: Որովհետեւ,  
բնութեան աստուածահաստատ տիեզերական օրէնքն է կարգ-կանոնը, որ  
կը հիմնուի ձգողութեան անշեղ սկզբունքին վրայ: Իսկ ձգողութիւն՝ կը  
նշանակէ փոխադարձ կապ: Վերցուցէք այդ ոյժը, եւ կը կորսուի կարգա-  
ւորութիւնը. տիեզերքը կը դառնայ քաոս: Նոյն սկզբունքը կը ղեկավարէ  
մարդկային կեանքը: Հոն ալ նոյն ձգողական բնատուր օրէնքը գոյութիւն  
ունի, ու կը կանոնաւորէ մեր փոխ-յարաբերութիւնները: Այդ սկզբունքը  
սէրն է: Ջնջեցէ՛ք զայն ծնողներուն մէջէն, եւ այլեւս ոչինչ կը մղէ զա-  
նոնք՝ խնամելու եւ աճեցնելու իրենց «պտուղը»: Հանեցէ՛ք սէրը զաւակ-  
ներուն սրտէն, եւ այնուհետեւ ոչ մէկ կապ կը զօղէ զանոնք ընտանիքին:  
Արմատախիլ ըրէք սէրը երիտասարդին մէջէն, եւ ոչ մէկ բան կը մնայ որ  
զինք շահագրգռէ եւ միացնէ ուրիշին, իր նմանին, ընկերութեան, ազգու-  
թեան, պետութեան, հայրենիքին: Ոչ մէկ կապ՝ եւ հետեւաբար ոչ մէկ պա-  
տասխանատուութիւն կ'ունենայ կեանքին, մարդոց ու գործին հանդէպ:  
Զոհողութեան գաղափարին տեղ չի մնար իր մէջ: Պարապութիւնը, քաոս-  
սը կը համակեն զինք: Ընդհակառակը՝ կը դառնայ ինքնակեդրոն եւ այ-  
լակործան այլանդակութիւն մը, հրէշ մը:

Սէրը բանալին է մարդկային կեանքին, եւ անոր հիմնական ար-  
տայալտութիւն է յարգանքը: Մերող մարդը արժէք կը տեսնէ իր սիրած  
անձին կամ առարկային մէջ – ուստի բնականաբար կը մեծարէ զայն, եւ  
անոր ընդմէջէն ինքզինք պատուած կ'ըլլայ: Մերող զաւակը կը յարգէ  
իր ծնողները, սիրող ամուսինը՝ իր կողակիցը, սիրող ազգասէրը՝ իր հայ-  
րենակիցը: Բնականաբար՝ այս յարգանքը կը թարգմանուի նաեւ գործ-

նական կերպով, եւ անոր առաջին արտայայտութիւնը հնազանդութիւնն է:

Հոս է որ, ահա, կարեւորութիւն կը ստանայ սիրոյ, յարգանքի եւ հնազանդութեան դաստիարակութիւնը: Ինչ որ բնածին կերպով մարդուն մէջ կայ որպէս անգիտակից մղում, պէտք է ճանաչուամի բերել. որեւէ սերմնահատիկ աճեցնելու եւ հասունցնելու է, որպէսզի դառնայ ամբողջական, լիարժէք: Այլապէս՝ տարբեր եւ վնասակար տունկեր արմատ կը նետեն, ճիշդ ինչպէս խոպան թողուած հողին վրայ փուշ ու տատակ կը բուսնին: Այս իմաստով է որ Առակաց Գրքը կ'ըսէ. «Մանուկին սրտին մէջ յիմարութիւն կայ նստած, զոր խրատի գաւազանը միայն կը հեռացնէ անկէ» (ԻԲ. 15):

Ըսենք անմիջապէս, որ յիշուած «խրատիչ գաւազան» բացատրութիւնը չի նշանակեր պարզապէս ծեծ կամ ծանր նիւթական տուգանք, այլ՝ յորդոր, յանդիմանութիւն, ուղղիչ միջոցներ եւ ի հարկին՝ նաեւ ֆիզիքական պատիժ: Կարելոր է գիտնալ, որ չկայ մէկ տեսակի մանկավարժութիւն. դաստիարակչական որեւէ սկզբունք կուրօրէն եւ մեքենականօրէն կարելի չէ պատշաճեցնելու բոլոր մանուկներուն՝ նոյն ձեւով: Ինչ որ կարող է շատ օգտակար ըլլալ մէկուն պարագային, ամենեւին ապարդիւն կրնայ մնալ ուրիշ մը համար: Սկզբունքը, սակայն, կը մնայ նոյնը. սրբագրել եւ ուղղել: Հնազանդութեան կրթել: Հնազանդութեան բայց որո՞ւ...:

Կարելոր չորս յարաբերութիւններ կան, զորս պէտք է նկատի առնել: Ասոնցմէ առաջինը՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԱՐԴՈՒՆ միջեւ կը կայանայ: Մարդը (դաստիարակուող մանուկը, պատանին) պէտք է սորվի սիրել ու յարգել զԱստուած եւ հնազանդիլ անոր: Տէրոջը հանդէպ այս յարգանքի եւ հնազանդութեան կեցուածքը Ս. Գրքին մէջ յաճախ կոչուած է «Աստուծոյ վախ» կամ «աստուածալսութիւն»: Ան համարուած է ամէն ճշմարիտ դաստիարակութեան հիմը: «Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է», կը կարդանք քանիցս Առակաց Գրքին մէջ (Ա. 7): Այս աստուածալսութիւնը իմաստութեան խրատը եւ առաջնորդութիւնը ընդունիլն է (ԺԵ. 33) եւ չարիքէն խորշիլը, զայն ատելը (Ը. 13): Աստուծոյ հնազանդութիւնը՝ զայն յանձն առնողին համար արդէն կը դառնայ կեանքի կողմնացոյց, ուղիղ արեւելում:

Պետրոս Առաքեալ կը յայտարարէ. «Պէտք է աւելի Աստուծոյ հնազանդիլ, քան մարդոց» (Գործք. Ե. 29), որովհետեւ այդ հնազանդութեան կապուած է Աստուծոյ ըրած կեանքի խոստումը. անկէ կախում ունի մեր թէ՛ ներկայ եւ թէ՛ հանդերձեալ գոյութիւնը: Քրիստոս յստակօրէն ըսաւ այս մէկը. «Ո՛վ որ չի հնազանդիր Որդիին՝ պիտի չտեսնէ կեանքը, այլ Աստուծոյ բարկութիւնը պիտի գայ անոր վրայ» - Յովհ. Գ. 36: Ահա թէ ինչո՞ւ Պողոս Առաքեալ կը գրէ իր աշակերտին՝ Տիմոթէոսի. «Ինքզինքդ աստուածապաշտութեամբ կրթէ, որովհետեւ մարմինը

կրթելը նուազ օգուտ ունի համեմատած աստուածապաշտութեան հետ, որ ամէն բանի օգտակար է, եւ կեանք կը խոստանայ թէ՛ ներկայ եւ թէ՛ հանդերձեալ աշխարհին մէջ» – Ա. Տիմ. Դ. 7.8: Այս ճշմարտութեան գիտակցող ոեւէ ծնող չի կրնար իր զաւակը հեռու պահել Աստուծոյ վախէն եւ զայն չկրթել Տէրոջը հնազանդութեան մէջ:

Երկրորդը՝ ԾՆՈՂԱՅ ԵՒ ԶԱԻԱԿՆԵՐՈՒ յարաբերութիւնն է. ոեւէ զաւակ պէտք է սորվի սիրել եւ յարգել իր հայրն ու մայրը, եւ հնազանդիլ անոնց: Ծնողք իրենց տղոց եւ աղջիկներուն համար Աստուծոյ ներկայացուցիչներն են. ոեւէ զաւակ անոնց ընդմէջէն պիտի ճանչնայ երկնաւոր Հօր պատկերն ու ճշմարտութիւնը: Հարկ կա՞յ ըսելու, թէ՛ ասիկա կախում ունի ծնողներու զգացած պատասխանատուութենէն եւ իրենց զաւակներուն ջամբած դաստիարակութենէն:

Աստուած համակ սէր ու քաղցրութիւն է, բայց միաժամանակ՝ արդարութիւն եւ ուղղութիւն: Ծնողներ նոյնպէս սիրոյ եւ քաղցրութեան տիպարներ պէտք է ըլլան, բայց նոյն ատեն գիտնալու են, թէ՛ առանց խստութեան ու յանդիմանութեան՝ չեն կրնար իրենց զաւակները ուղղութեան մէջ պահել: Քաղցրութիւն եւ սէր չեն նշանակիր թուլութիւն, աչք գոցել թերացումներուն, տեղի տալ լացին ու պոռչտութիւն առջեւ: Թէ՛ քաղցրութիւնը եւ թէ՛ խստութիւնը իրենց տեղը պէտք է ունենան: Առանց քաղցրութեան՝ խստութիւնը կը դառնայ բռնատիրութիւն, ու դառնութիւններ կը ձգէ մանուկ հոգիներուն վրայ: Բայց նոյնքան եւ աւելի վտանգաւոր է խստութենէ զուրկ քաղցրութիւնը, որ կը շփացնէ ու կ'այլախառնէ, կը փճացնէ եւ կը կործանէ տղուն ապագան: Դարաւոր փորձառութիւնը շատ լաւ կը սահմանէ այս ճշմարտութիւնը. «Գաւազանիս խնայողը իր որդին կ'ատէ: Իր որդին սիրողը կանուխէն կը խրատէ զայն»: «Գաւազանն ու յանդիմանութիւնը իմաստութիւն կուտան. բայց իր կամքին ձգուած տղան իր մայրը կ'ամչցնէ» – Առակ. ԺԳ. 24. ԻԹ. 15:

Շատ մը ծնողներ այս ճշմարտութեան իրազեկ ըլլալով հանդերձ՝ չեն ուզեր իրենց զաւակը ցաւցնել, վախնալով որ պատիժն ու խստութիւնը կրնան զայն իրենցմէ հեռացնել կամ պաղեցնել: Մինչդեռ հակառակ է իրականութիւնը. այսինքն՝ զաւակներ աւելի մեծ յարգանքով ու երախտագիտութեամբ կը կապուին իրենց ծնողներուն, երբ կը զգան թէ՛ արդար է տրուած պատիժը. իրենց իսկ բարիքին համար: «Ճիշդ է որ ամէն յանդիմանութիւն նոյն պահուն չուրախացներ, այլ կը ցաւցնէ, բայց յետոյ պատճառ կ'ըլլայ որ անով կրթուածները արդար կեանքի մը պարգեւած խաղաղութիւնը վայելեն», կ'ըսէ Պօղոս Առաքեալ (Եբբ. ԺԲ. 11): Մանուկն ու պատանին կրնան չտեսնել ապագայ բարիքը. ծնողները պարտաւոր են զայն նկատի առնել: Աստուծոյ կողմէ իրենց վրայ դրած պարտականութիւնն է ատիկա, գոր Առակաց Գիրքը կը յիշեցնէ՝ ընդգծելով. «Տղայէն խրատը մի՛ կտրեր, որովհետեւ եթէ՛ գաւազանով ձեծես՝ չի մեռնիր: Մինչդեռ զայն գաւազանով պատժելով՝ անոր հոգին

դժոխքէն կ'ազատես» (ԻԳ. 13-14): «Քանի յոյս կայ՝ տղադ խրատէ, եւ անոր մահուանը կամակից մի՛ ըլլար» (ԺԹ. 18): Իսկ անգամ մը որ մանուկը կամ պատանին սորվեցաւ հնազանդիլ, այնուհետեւ բաց է իր առջեւ դաստիարակութեան եւ իմաստութեան ճամբան:

Երբորդը՝ ԱՅՐ ԵՒ ԿՆՈՋ ընտանեկան յարաբերութիւնն է: Ոեւէ զաւակ աշտմէն պէտք է սորվի, թէ ինք կը պարտաւորուի ընկերային կեանքի մէջ մտնել եւ այնտեղ շատ կարեւոր դեր մը խաղալ՝ բնականաբար ընտանիք կազմելով, անձը եւ կեանքը կապելով ուրիշի մը, սիրելով ու յարգելով զայն, եւ հնազանդելով անոր: Սիրոյ եւ ամուսնութեան մասին զանազան հասկացողութիւններ կան ու կրնան ըլլալ, բայց կարելի չէ յաջողութիւն գտնել ընտանեկան կեանքէն ներս՝ առանց փոխադարձ յարգանքի եւ հնազանդութեան: Քրիստոնէական կրթութեան անբաժան մէկ մասը պէտք է ըլլայ նաեւ ասիկա: Պօղոս հետեւեալ հրահանգով կը դիմէ այրերուն եւ կիներուն. «Հնազանդեցէ՛ք իրարու, Քրիստոսի հանդէպ ունեցած ձեր երկիւղովը: Կիները պարտին իրենց այրերուն հնազանդիլ՝ ինչպէս Տէրոջ պիտի հնազանդէին, որովհետեւ ամուսինն է կնոջ գլուխը, ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին: ...Այրեր, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար...» - Եփես. Ե. 21-23, 25: Այս հնազանդութեան գիտակցութիւնը սիրոյ եւ յարգանքի բնական ծնունդը ըլլալու է. բայց կրկին դաստիարակութեամբ է որ կը զարգանայ: Իսկ վերջինը օղէն չի գար, դպրոցներու մէջ չի տրուիր, այլ՝ ծնողներուն կողմէ, եթէ կ'ուզեն իսկապէս իրենց զաւակները կեանքին պատրաստել: Որովհետեւ՝ ասոնց համար այդ կեանքը ամուսնական բոյնը պիտի ըլլայ, որուն կայունութիւնը կախում ունի դարձեալ նոյն հնազանդութեան դաստիարակութենէն:

Վերջին յարաբերութիւնը՝ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՀԱՏԻՆ միջեւ է: Ոեւէ զաւակ սորվելու է, թէ ինք պիտի ապրի ու գործէ ազգի մը գիրկին, պետութեան մը սահմաններուն մէջ: Հետեւաբար պէտք է ենթարկուի անոնց հրամաններուն, որքան ատեն որ չի բռնաբարուիր իր խղճի ազատութիւնը: Դարձեալ, բնածին սէրը ազգ կոչուող հաւաքականութեան հանդէպ, յարգանքը այն արժէքներուն վերաբերմամբ՝ որոնք անոր ստեղծագործութիւնն են, կը պահանջեն հնազանդութիւն այն պետական կառոյցին հանդէպ, որ հասարակաց բարիքը, խնամքը եւ շահերու պաշտպանութիւնը կ'ապահովէ: Քաղաքացիական առողջ կրթութիւն մը քրիստոնէական աշխարհայեացքին մէջ իր տեղը ունի, եւ անհատին կը սորվեցնէ հնազանդիլ հաւաքական շահերուն եւ իրաւունքներուն: Պօղոս Առաքեալ ընդհանրապէս հաւատացեալներուն ականարկելով՝ հետեւեալը կը գրէ Տիտոսի. «Յիշեցուր անոնց՝ հնազանդ ըլլալ եւ հպատակիլ իշխանութիւններուն ու պետութիւններուն, եւ պատրաստ ըլլալ ամէն բարի գործերու» - Տիտ. Գ. 1:

Պարզ է, թէ յարաբերութեանց յիշեալ բոլոր կալուածներուն մէջ ալ

հնազանդութիւնը նպատակ է բնաւ: Առաջադրութիւնը միշտ՝ մարդուն կերտումն է, կարգաւորեալ կեանքի մը շրջագիծին մէջ: Շատերու համար թերեւս անախորժ թուի հնազանդութեան այս հասկացողութիւնը, որովհետեւ անիկա օրէնքի ենթարկում կը յուշէ: Շիտակ է թէ հնազանդութիւնը անմիջականօրէն զօգուած է օրէնքի հասկացողութեան: Չմոռնանք որ ամբողջ կեանքը կապուած է մարդոց յարաբերութիւնները կարգաւորող օրէնքներու: Եւ սակայն, օրէնքին բեռը չեն զգար անոնք՝ որ բնական հասկացողութեամբ ու վարժութեամբ կը յարգեն անոր տրամադրութիւնները:

Օրէնքը դաստիարակի դեր կը կատարէ այնքան ատեն՝ որ մարդիկ պէտք ունին անով կրթուելու եւ ուղղուելու, իսկ այնուհետեւ կը դադրի այդ հանգամանքէն: Նոյնպէս եւ քրիստոնեային համար հնազանդութիւնը: Նախ անոր միջոցաւ կը կրթուի: Իսկ երբ չափահասութեան հասնի, ա՛լ զայն չի կրեր որպէս օրէնք եւ բեռ, որովհետեւ արդէն շնորհքի դաստիարակութեան անցած կ'ըլլայ:

Զարեհ Արք. Ազնաւորեան



# ՀԱՒԱՏՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

«Զհաւատսն պահեցի» (Բ. ՏԻՄ. Դ. 7):

Պօղոս Առաքեալ իր կեանքի վերջաւորութեան կը գրէ իր Տիմոթէոս աշակերտին, կարծես ներքին գոհունակութեամբ եւ խորունկ պարծանքով մը, թէ կրցած է պահել իր հաւատքը:

Ամէն մարդ իր կեանքի վերջաւորութեան՝ ինքնամխիթարութեան եւ ինքնագովութեան կերպ մը ունի: Ծանծաղամիտներ կը պարծենան իրենց վայելած հաճոյքներով, գրագէտներ՝ իրենց գրական վաստակներով, բժիշկներ՝ իրենց կատարած յաջող գործողութիւններով, արուեստագէտներ եւ գիտնականներ՝ իրենց ստեղծագործութիւններով եւ գիւտերով, որոնց շնորհիւ կրցած են մարդկութեան բերել կտոր մը լոյս, ափ մը բարիք, յագեցնելու համար կեանքի ծարաւը:

Պօղոս Առաքեալ յառաջացած տարիքին երբ կը նայի իր անցեալի կեանքին, որ իրապէս մեծ տագնապներով ու ոգորումներով լեցուն էր, մէկ պարծանք ունի միայն, թէ կրցած է պահել իր հաւատքը: Կեանքը առած էր իրմէ իր ճառագայթուն մանկութիւնը, իր երիտասարդութեան կրակները, սակայն իրեն թողած էր իր հաւատքը՝ ամէնէն թանկագին բանը իր կեանքին:

Հաւատքը իրեն համար շարանը չէ միայն անցեալէն ապագային երկարող ճշմարտութիւններու, այլ՝ յայտնութիւն մը, ապրող իրականութիւն մը: Հաւատքը իրեն համար վարդապետութիւն մը չէ միայն, այլ՝ աւանդ մը, պատգամ մը անցեալէն ապագային գացող: Իրական հաւատքը շարքը չէ մտածումներու, որոնք ամէն եղանակներուն կրնան փոխուիլ մարդոց հագած զգեստներուն նման: Շատերու համար իրենց հաւատքը կը նմանի թռչունի բոյնի՝ ամէն եղանակի շինուելու եւ քանդուելու համար:

Առանց ճշմարիտ հաւատքի չկայ իտէալ, չկայ մեծագործութիւն: Բոլոր մեծ գործերու եւ մեծ իրագործումներու հեղինակները հաւատքի մարդեր են եղած: Առանց այդ ներքին կայծին, առանց այդ ներշնչումին, մարդիկ ինչ ասպարէզի ալ պատկանին, կը նմանին շուրին երեսը ծփացող տաշեղներու, որոնք զուրկ են նպատակէ եւ հետեւաբար ուղղութենէ մը:

Սուրբ Գիրքը լեցուն է քրիստոնէական վարդապետութիւններու ճշմարտութիւններով: Անոր մէջ մասնաւոր կերպով շեշտուած է հաւատքի գորութիւնը, ինչպէս հեռատես կնոջ (Մատթ. Թ. 22), երկու կոյրերու (Մատթ. Թ. 29) բժշկութիւններու պարագային: Ուրեմն առանց կատարեալ հաւատքի չկայ բժշկութիւն ո՛չ մարմնի եւ ո՛չ ալ հոգիի: Առանց հաւատքի, յոյսի եւ սիրոյ՝ կեանքը դատարկութիւն է, յուսահատութիւն եւ մահ: Քրիստոնեայ մը ամէն բանէ առաջ պէտք է հաւատք ունենայ ձգտելու համար կատարելութեան, որովհետեւ հաւատքն է որ անհատը

պիտի առաջնորդէ դէպի յաւիտենականութեան եւ անմահութեան: Ով որ չի հաւատար յաւիտենականութեան, արդէն իսկ մեռած է հոգեպէս եւ բարոյապէս:

Հին Կտակարանէն կ'իմանանք, թէ Աբրահամ գնահատուեցաւ եւ օրհնուեցաւ Աստուծոյ կողմէ, շնորհիւ իր ունեցած մեծ հաւատքին: Ան իր ունեցած կատարեալ եւ վեհ հաւատքը պահելով, փոխանցեց իր զաւակներուն եւ իր սերունդը աճելով բազմացաւ: Աբրահամ հաւատքի սիրոյն յանձն առաւ իր միակ զաւակը գոհել Աստուծոյ:

Հայ ժողովուրդն ալ ունեցաւ իր մեծ հաւատացեալն ու սուրբը՝ Գրիգոր Լուսաւորիչ: Ան հաւատքի մարմնացումն էր: Կը զգար, թէ առանց ճշմարիտ Աստուծոյ հաւատքին կարելի չէր ժողովուրդը առաջնորդել դէպի հոգիի փրկութեան ուղին: Լուսաւորիչ իր հաւատքին զօրութեամբ կրեց բազմաթիւ անտանելի չարչարանքներ եւ ի վերջոյ յաղթական դուրս ելաւ եւ լուսաւորեց Հայաստան աշխարհը եւ մենք այդ օրէն սկսեալ հոգեպէս փարեցանք քրիստոնէութեան եւ ազգ եւ եկեղեցի իրար միացան:

Աւետարանի հասկացողութիւնը առաջին օրէն Հայ ժողովուրդին մէջ այնքան իրական եւ ուշագրաւ եղաւ, որ ուղղակի սքանչացում միայն կրնայ առթել: Հայը սկսաւ յառաջդիմել հաւատքով եւ ուղղափառ վարդապետութեամբ: Եկեղեցին ունեցաւ մեծ սուրբեր, որոնք իրենց հաւատքը պահելու համար նահատակուեցան: Մինչեւ Ե. դար ունեցանք մեծ թիւով օտար սուրբեր, ինչ որ ցոյց կուտայ, թէ Հայ Եկեղեցին կղզիացած եկեղեցի մը եղած չէ, այլ մաս կազմած է եւ կը կազմէ ընդհանրական եւ մէկ Եկեղեցիին:

Եկեղեցականներ մեծ նեղութիւն կ'ունենային Ս. Գիրքը ժողովուրդին բացատրելու եւ քարոզելու համար, որովհետեւ սեփական գիր գոյութիւն չունէր տակաւին: Սուրբ Մեսրոպ Մաշտոց մեծապէս տառապեցաւ, մինչեւ որ կրցաւ յօրինել հայերէն նշանագրերը: Ան հաւատքի մարդ էր. կը հաւատար, որ Աստուծոյ օգնութեամբ պիտի կարենար գտնել հայերէն գիրերը: Ուստի յարատեւելով իր աշխատանքին մէջ, լուսաւորեց Հայ ժողովուրդին միտքը եւ գայն փրկեց ձուլումէ:

Շուտով դպրոցներ բացուեցան եւ մայրենի լեզուն սկսաւ ուսուցուիլ Հայ մանուկներուն: Հայոց մշակոյթը մեծ թափ ստացաւ Ս. Գիրքի հայերէն թարգմանութեամբ: Պատրաստուեցան ծիսական եւ այլ գիրքեր: Ունեցանք ազգային ականդութիւններ եւ ընտանեկան սրբութիւններ, որոնք սերունդէ սերունդ փոխանցուելով հասան մինչեւ մեր օրերը: Եկեղեցի եւ ազգութիւն միասին յառաջացան եւ մէկը միւսին պաշտպան կանգնեցաւ: Այն անհատը որ բաժնուեցաւ իր եկեղեցւոյ ուղղափառ հաւատքէն, շուտով կորսուեցաւ հոգեպէս եւ բարոյապէս՝ ձուլուելով օտար ժողովուրդներու մէջ:

Հայց. Եկեղեցւոյ նուիրապետական դրութիւնը զօրացած է ազգա-

յին մտատիրպարի, բարքերու, սովորութիւններու լեզուի եւ եւ գրականութեան, կեանքի իմացական եւ բարոյական ներգործութիւններու, միտքի եւ արուեստի ազդակներուն շնորհիւ: Կրօնի զգացումն ու ազգութեան գաղափարը փոխադարձաբար զիրար ամրապնդող եւ իրարու հետ շաղահիւսուած բարոյական զոյգ ուժեր են եկած մեր դարաւոր կեանքի իրականութեան մէջ: Հայ Եկեղեցին քրիստոնէական առաջին դարէն իսկ եղած է իմացական եւ բարոյական կեանքի միակ կեդրոնը իր ժողովուրդին: Հաւատքի եւ ազգութեան իտէյալը կանուխէն ճանչցած են զիրար եւ մէկը միւսով ոգեւորուած եւ ամբողջացած է: Մեր Եկեղեցին եղած է զուտ ազգային եկեղեցի եւ չկայ այն խիստ տարրորշումը եկեղեցւոյ եւ ազգին միջեւ, ինչպէս ուրիշներ ընդհանուր կերպով կ'ընեն:

Հայ Եկեղեցին քրիստոսահիմն սուրբ հաստատութիւն մըն է, ուր հայ հոգին՝ շնորհիւ իր ուղղափառ հաւատքին կրնայ ինքզինք ապահով պահել արտաքին ազդեցութիւններէ եւ վտանգներէ: Առանց Հայց. Եկեղեցւոյ հաւատքին եւ ջերմ գգայնութեան, մենք չենք կրնար պահել մեր ազգութիւնը:

Հայ Եկեղեցւոյ գաղափարը այն ոգին է, որ դարեր շարունակ ապրեցաւ ազգին մէջ եւ օգնական եղաւ անոր իր ամէնէն աղիտալի եւ ճգնաժամային վայրկեաններուն: Հայրապետներ մեծապէս պայծառացուցին մեր եկեղեցին, ստեղծելով սեփական գիր, ազգային գրականութիւն եւ մշակոյթ: Գրուեցան եկեղեցական երգեր, շարականներ եւ աղօթքներ, որոնք մեր եկեղեցւոյ անգին գանձերը կը կազմեն մինչեւ այսօր: Հայը կրցաւ իր սրբութիւնները պահել, քանի որ գիտցաւ զոհուել իր հաւատքին համար:

Այսպիսով կը տեսնենք, թէ մեզի շատ բաներ աւանդուած են մեր երանելի նախնիքներէն: Ուստի մեզի ալ պարտք կ'իյնայ զանոնք պահել եւ սրտի գոհունակութեամբ ու պարծանքով փոխանցել մեր յաջորդներուն: Պօղոս Առաքեալին նման ըսելով, թէ՛ «Զհաւատսն պահեցի»:

Սիփան Ա. Քինյ. Մխսեան

# ՅԻՍՈՒՍ ԵՒ ՆԻԿՈՂԵՄՈՍ

Որպէսզի կարենաք աւելի լաւ հասկնալ Նիկողեմոսի հանդիպումը Յիսուսի հետ, եւ անոնց ունեցած խօսակցութիւնը, հարկ է կարդալ Աւետարան ըստ Յովհաննէսի շրջ գլխուն վերջին 3 համարները:

Թէ ինչո՞ւ Յիսուս ինքզինք չէր վստահեր Երուսաղէմի մարդոց՝ կրնայ ունենալ երկու տարբեր բացատրութիւններ: Առաջինը՝ Կանայի հարսնիքին, երբ Յիսուս իր հրաշքը կատարեց ջուրը գինիի փոխելով, իր փառքը յայտնեց եւ իբր հետեւանք՝ իր աշակերտները հաւատացին իրեն: Սակայն Երուսաղէմի մէջ գործած հրաշքներուն պարագային չենք տեսներ թէ նոյն բանը կրկնուեցան, այսինքն իր փառքին յայտնութիւնը չտեսանք:

Ուրեմն անոնց մէջ որոնք իր գործերը տեսնելով հաւատացին իրեն՝ Յիսուս չտեսաւ այն հաւատքը որ կրնար զանոնք աշակերտ եւ հետեւորդ դարձնել: Այս իսկ պատճառով կրնանք ըսել, թէ Յիսուս ինքզինք չէր վստահեր Երուսաղէմի մարդոց հաւատքին, եւ կամ, ըսենք, թէ բաւարար չէր գտներ անոնց հաւատքը: Երուսաղէմի մարդիկը աւելի պահանջկոտ էին եւ վերապահութիւններով ընդունեցին Յիսուսի կատարած գործերը: Օրինակի համար՝ երբ Նիկողեմոս կը ջանայ դրական խօսք մը ըսել ի նպաստ Յիսուսին, իր Սանհետրիսի ընկերները կ'ըսեն իրեն. «Միթէ դո՞ւ ալ Գալիլեայէն ես. քննէ Սուրբ Գրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր» (ՅՋ 7.52):

Ուրիշ օրինակ մը պիտի ըլլար այն պարագան երբ Յիսուս Երուսաղէմի մէջ բժշկեց ի ծնէ կոյր մարդ մը. եւ սակայն հրեաները կը տարակուսէին եւ կը դժուարանային ընդունիլ թէ Յիսուս այդ հրաշքը իսկապէս կատարեց (ՅՋ 9.1-34):

Ուրեմն՝ Երուսաղէմացիք տարակուսանքով, նախատանքով եւ արհամարհանքով կը նայէին Յիսուսին, եւ բնական է նաեւ՝ որոշ վերապահութիւններով: Շատ հաւանական է որ այս վերջինն էր պատճառը թէ ինչո՞ւ Յիսուս իր անձը չէր վստահէր անոնց:

Գանք հիմա երրորդ գլուխին մէջ գտնուած մեր այսօրուան սերտողութեան: Հոս կը տեսնենք Փարիսեցիներէն մարդ մը: Կ'արժէ նշել, թէ՛ փարիսեցի մը՝ չ'ըսեր, այլ՝ փարիսեցիներէն մարդ մը:

Հոս պէտք է ըսել թէ Նիկողեմոս անդամ էր Սանհետրիսին, հրեական խորհրդարանին, ըստ Ն.Գ.ի մասնաղէտներուն, եւ կը պատկանէր Փարիսեցիներու խումբին: Թէ ան ղրկո՞ւած էր այդ խումբին կողմէ, թէ ոչ ինքն իրմէ՞ եկած էր, կարելի չէ ճշդել, որովհետեւ երկու պարագաներն ալ նոյնքան հաւանական կը թուին ըլլալ: Անձամբ ես կը հակիմ երկրորդ տեսակէտին, թէ ինք իրմէ եկած էր, եւ ոչ թէ ղրկուած խումբի մը կողմէ: Այս կը բացատրէ նաեւ անոր գիշերով Յիսուսի գալը:

Կրնանք ըսել, թէ Նիկողեմոսի գիշերով Յիսուսի այցելելը կուտայ

Թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական պատկեր մը: Դրական՝ որովհետեւ ան փնտուեց ու եկաւ Յիսուսին: ՅՀ 1.40-41 համարներուն մէջ կը տեսնենք Յիսուսը փնտուելը աշակերտութեան առաջին քայլն է: Իսկ ժխտական պատկերը այն է, թէ ան գիշերով, գաղտնօրէն եկաւ Յիսուսի մօտ: Հետաքրքրական է նշել, թէ Յովհաննէսի աւետարանին մէջ յաճախ կը հանդիպինք երկիմաստ խօսքերու: Անոնցմէ մին է՝ գիշերով եկաւ խօսքը: Ան կրնայ նշանակել, թէ այս մարդը, Նիկողեմոս, գաղտնաբար եկաւ Յիսուսի, հաւանաբար իր Փարիսեցիներուն խումբէն գաղտնի, եւ կամ հրեաներուն վախէն:

Երկրորդ՝ գիշերով Յիսուսի դալը կրնայ ըլլալ ակնարկութիւն մը Նիկողեմոսի երկնային բաներու մասին իր ունեցած խաւարին, եւ խաւարը ունի նաեւ չարի եւ մեղքի իմաստը (Տես ՅՅ 9.4, 11.10, 13.30):

Հմ. 2բ Նիկողեմոս իր բերանը կը բանայ եւ կը խօսի յոգնակի առաջին դէմքով, գիտենք, չ՛ըսեր գիտեմ: Ուրեմն՝ հոս պէտք է հասկնանք, թէ Նիկողեմոս, թէպէտ եկած առանձին, կ'արտայայտէ ոչ միայն իր գաղափարը՝ այլ նաեւ ուրիշներուն ալ, երբ կ'ըսէ՝ գիտեմք (յոգնակի), հաւանաբար ակնարկելով իր պատկանած խումբէն կարգ մը փարիսեցիներուն:

Հոս կ'արժէ յիշել թէ փարիսեցիներէն կային ոմանք որոնք Յիսուսի մասին աւելի դրական կեցուածք մը ունէին: «Գիտեմք որ դուն Աստուծմէ դրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ» (ՅՅ 3.2): Հարց է թէ այս խօսքը համոզումով ըսուած գովք մըն է, թէ ոչ պարզապէս՝ շողոքորթութիւն մը: Որեւէ պատճառ մը չկայ այս խօսքը որպէս շողոքորթութիւն նկատելու, եթէ նկատի առնենք ինչ պայմաններու տակ ան եկաւ Յիսուսի մօտ: Եւ եթէ ընդունինք, թէ Նիկողեմոս այս խօսքը համոզումով կատարեց, այդ կը նշանակէ թէ ուրիշներ ալ կային, թերեւս փարիսեցիներու խումբէն ոմանք, ինչպէս ըսինք արդէն, որոնք ունէին այս նոյն համոզումը, թէ Յիսուս Աստուծմէ դրկուած ուսուցիչ մըն էր:

Նախ ըսենք՝ թէ Նիկողեմոսի խօսքը հարցում մը չէ, եւ հաւանաբար ան պիտի շարունակէր իր խօսքը, եթէ Յիսուս զինք չընդմիջէր ըսելով, «Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի, չի կրնար տեսնել Աստուծոյ թագաւորութիւնը» (ՅՅ 3.3): Յիսուսի այս ընդմիջումը պէտք չէ նկատուի անկիրթ, կամ անքաղաքավար ժեսթ մը: Ընդհակառակը ան իր այս ընդմիջումով կը դնէր խօսակցութիւնը իր շիտակ եւ օգտակար հունին մէջ, վերստին ծնունդի նիւթը յառաջ քշելով:

Հոս երկու բան կայ որ բացատրութեան կը կարօտի. Աստուծոյ թագաւորութիւնը եւ անոր մասնակցելու օրհնութեան միջոցը, վերստին ծնունդը:

Աստուծոյ թագաւորութիւնը գլխաւոր նիւթն էր Յիսուսի վարդապետութեան: Իր աւետարանին քարոզութիւնը եւ զայն հասկնալի

դարձնելու իր ջանքին մէջ տրուած օրինակները եւ առականերու միջոցաւ տուած պատկերացումները բոլորն ալ կը դառնային Աստուծոյ թագաւորութեան շուրջ: Չորս աւետարաններու պարունակութիւնէն կը հետեւցնենք թէ Յիսուսի համար Աստուծոյ թագաւորութեան մասնակից ըլլալը ամենէն թանկագին, ամենէն կարեւոր, ամենէն բարձր, եւ ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր առաջնակարգ կարեւորութիւն մը պէտք է ունենար մարդու մը կեանքին մէջ: Ան ըսաւ իրեն եկող ժողովուրդին. «Առաջ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը...» (Մտ 6.33): Ամէն բանէ առաջ Աստուծոյ թագաւորութիւնը:

Գալով վերստին ծնունդին՝ նախ նկատի առնենք թեքնիք մասը: Վերստին բառը թարգմանուած է յունարէն բնագրին «անօթէն» բառէն, որ ունի երկու հաւասար արժէքներով իմաստներ, վերէն եւ վերստին, ինչ որ երբեմն կը հասկնանք կրկին, կամ երկրորդ անգամ: Պէտք է ըսել, թէ այս ամբողջ հատուածին, ՅՆ 3.1-12, տիրող նիւթը այս է, վերստին ծնունդ, կամ վերէն եկած, վերէն բխած ծնունդ:

Նիկողեմոսի հարցումէն կը հետեւցնենք, թէ վերստին ծնունդ է. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ: Կարելի բա՞ն է որ ան կրկին մտնէ իր մօրը որովայնը եւ ծնի» (ՅՆ 3.4): Սակայն կը գտնենք, թէ երկու իմաստներն ալ իրենց տեղը ունին այս բացատրութեան մէջ, վերստին կ'ակնարկէ ժամանակին, իսկ վերէն կ'ակնարկէ տեղին:

Ուրեմն՝ մարդ պէտք է վերստին ծնի Աստուծոյ թագաւորութեան արժանանալու համար: Այս վերստին ծնելու գաղափարը կը գտնենք նաեւ այլուր՝ Նոր Կտակարանին մէջ, ՅՆ 1.13, Տիտ 3.5, Ա Պտ 1.3 եւ 1.23:

Երբ Նիկողեմոս զարմացած կը հարցնէ. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրայ ծնիլ: Կարելի՞ բան է որ ան կրկին մտնէ իր մօրը որովայնը եւ ծնի», Յիսուսի պատասխանը կ'ըլլայ աւելի լայն եւ մանրամասն բացատրութիւն մը տալ վերստին ծնունդին մասին:

«Եթէ մէկը շուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուք մի գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պետք է վերստին ծնիք» (ՅՆ 3.5-7):

Վերստին ծնունդը, ինչ կերպով ալ հասկցուի ան, վերէն՝ այսինքն Հոգիէն ծնիլ, կամ երկրորդ անգամ ծնիլ, արդիւնքը նոյնն է, թէ մարդս կը սկսի նոր կեանք մը. անոր կեանքին մէջ կը բացուի նոր էջ մը, նոր իրականութիւն մը, նոր ճամբայ մը, նոր ընթացք մը, որ կ'ուղղուի դէպի երկինք:

Վեր. Ժիրայր Պատիկեան

## ՏԷՐ, ԼՈՅՍ ԻՄ ԵՒ ԿԵԱՆՔ ԻՄ

Տէ՛ր, լոյս ի՛մ եւ կեանք ի՛մ, այժմ եւ յաւիտեան:  
Իսկ ես ահա տակաւ-տակաւ կ'անհետանամ՝  
Մաշեցնելով լոյսը աչքիս, թեյը կեանքիս,  
Խորտակուելով վիհերի մէջ խաւարային:

Քամուն տալով երազանքներն իմ անկատար,  
Խամրած սիրուս խորշումները աղեհառաջ:  
Կը հեռանամ՝ լքուած իբրեւ հիւթաքամ ճիւղ  
Քուրմերից այն մանրախնդիր եւ անհանճար:

Գուցէ դառնամ բազում անգամ անարգ փոշի,  
Այդուհանդերձ իմ խոհերի տաք անկիւնում  
Դու կը մնաս որպէս իմ լոյս, իմ կեանք եւ յոյս,  
Տէր բարերար ե՛ւ քուրմերի, ե՛ւ համայնի:

Ու չես թողնի, որ ես մընամ յաւէտ փոշոտ,  
Եւ մի օր էլ ոտքի կ'ելնեմ վերակենցաղ,  
Սուրբ շընորհիդ վեհասլաց թեւերի տակ,  
Դառնալով տաղ՝ քաղցր, թովիչ ու տենչալի:

## ՀՊԱՐՏ ՅԱԻՏԵԱՆ

Մայր ի՛մ, թանկագի՛շ,  
Ուրախ եղի՛ր դու՝ պարծանքով անհուն,  
Զի քո որդին, թէկուզ օտարութեան  
Անհրաժեշտ կալ պայմաններում լքուած,  
Զթերացաւ ըմբռնինել հանապազ  
Քաղցրութիւնը այն փառապանծ լեզուի,  
Որ գերդ սրբութիւն յանձնեցիր նրան:

Մայր ի՛մ, սրբագի՛շ,  
Հոգիդ թող հանգչի խաղաղ յաւիտեան,  
Զի քո որդին, թէկուզ խաւարային  
Անհրապոյր տարածքներում մոլոր,  
Քեզնից ստացած լոյսը հաւատքի  
Իր սրտում պահեց յաւէտ անսպառ  
Որպէս տենչալի փարոս փրկութեան:

Մայր ի՛մ, սրբաշո՛ւք,  
Իմ գլխի վերեւ շուքրդ թող մնայ  
Իբրեւ մշտածոր օրհնութիւն անգին,  
Որ այս աշխարհի տարածքին վրայ  
Ես երբեք չզգամ ցաւը խաբկանքի  
Օտարաբարոյ խոցող սէրերի  
Կամ դաւաճանող մարդկանց անուայ:

Մայր ի՛մ, սրբանոյշ,  
Մնա՛ դու այդպէս հպարտ յաւիտեան,  
Զի քո որդին, եթէ մի օր ընկնի  
Հողի վրայ յոգնած կամ կարեւելի,  
Մի ձեռքով դարձնեալ պիտի վեր պահի  
Դրօշը ոգու մարդկանց անվհահեր՝  
Մինչեւ այն յանձնի որդուն գալիքի:

## ՆԱԽԱՏԻՆՔԻ ՆՇԱԽԱԿ

Եւ մենք դարձանք նախատինքի նշաւակ:  
Ձգիտէինք, թէ մարդակերպ գաճաճներ  
Դրած դիմակ հայրենասէր ասպետի  
Կամ պաճուճուած պատմուճանով քուրմերի  
Դաւելու են վեհագընաց մեր երթին:

Նրանց համար մենք այսօր էլ «սուրբ հայր» ենք,  
Թէ մասնակցենք խրախճանքին իրենց պիղծ՝  
Խեղդելով ճիչն արգարատենչ զրկուածի  
Կամ իրենց պէս ծաղրելով մեր հայկազնեայ  
Վսեմ հոգու քանքարները ասողալից:

Մենք ապրել ենք ոտաբոսպիկ, կիսաքաղց,  
Կը նախընտրենք այդպէս ապրել առյաւէտ,  
Քան մասնակցել խրախճանքին այն վայրագ,  
Ուր մեղկուժեան շունչն է փչում ժանտալից,  
Եւ գաճաճներ պար են բռնում Նեոի հետ:

Դրա համար մոլորուած դեսպանները այդ Նեոի  
Մեզ յաւիտեան չեն ների եւ կը դարձնեն  
Ատելավառ նախատինքի նշաւակ՝  
Աջից-ձախից գոռալով, թէ մենք համակ  
Աղբի կոյտ ենք՝ ոչնչացման արժանի:

Ո՛հ, երանի՛ թէ մենք, իբրեւ այդպիսին,  
Լինենք սնունդ ծաղիկներին գունագեղ՝  
Աւետաբեր մի նոր գարնան կենսայորդ,  
Քան թէ դառնանք մռայլ դեսպան չարիքի՝  
Միշտ դառնաժանտ ու դաւադիր գոյուժեամբ:

Յակոբ Արք. Գլնեան

# ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԸ

«Արդար գործերու վարձքը՝

կեանք է»:

Ա.Ն. 11.30:

Մեր գէնքը նախ եւ առաջ ու վերջ՝ հոգեւոր հայրենիքին վերակերտումն է:

Հոգին շինէ՝ նիւթը կը շինուի եւ կը դիմանայ. առանց հոգիին միայն նիւթը շինէ՝ անոր քայքայումը կը տեսնես: Ինչպէս իր հոգիէն պարպուած մարմինը կը քայքայուի, նոյնպէս ալ հոգեզուրկ նիւթական իրականութիւնը կը քայքայուի:

Հայաստան թէ՛ Սփիւռք՝ հոգեւոր տարածքին մէջ ընհանուր նահանջը ահաւոր համեմատութիւններու հասած է, եւ մարգարէ ըլլալու պէտքը չկայ ըսելու՝ թէ՛ վախճանը ողբալի պիտի ըլլայ:

Երբ «հոգեւոր» կ'ըսեմ՝ չեմ հասկնար Ս. Գիրքը թեւին տակ սեղմած, կամ պայտուակին մէջ դրած պտտիլը, եւ ոչ ալ աղօթելու համար տեղէ տեղ ոստոստելը, այլ կը հասկնամ այն արթնութիւնը, նուիրումն ու աշխատասիրութիւնը, որ Աստուծոյ Հոգիով օծուած՝ արդար գործեր կ'իրականացնէ:

Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց իր վարդապետ եղած ժամանակը սքանչելի յօդուած մը գրած եւ լոյս ընծայած է այն օրերու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Արարատ»ի մէջ: Անիկա յետագային ամփոփուեցաւ «Դէպի Լոյս եւ Կեանք» հատորին մէջ: Յօդուածին անունն է «Մեր Հոգեւոր Հայրենիքը»:

Ուսումնական եւ մտաւորական վարդապետը «հոգեւոր հայրենիք»ի մասին հետեւեալ բացատրականը տուած է. «Մարդու կեանքը կենդանականի եւ հոգեւորի մի գումար է, այսպէս էլ նորա հայրենիքի դադափարը երկու երեսից բաղկացած եւ միմեանց հետ սերտ կապուած մի ամբողջութիւն»: Մարդ էակը կենդանական աշխարհէն կը տարբերի իր հոգեւոր տարածքով: Ուրեմն, կայ կենդանական հայրենիքը եւ կայ հոգեւորը:

Կենդանական հայրենիքը այն տարածքն է, ուր մարդ էակը իբր կենդանի կ'ապրի:

Իսկ Գարեգին վարդապետ ինչպէ՞ս հասկցած է հոգեւոր հայրենիքը:

Ըսած է. «Հայ ժողովրդի գիտակցական քաղաքակրթութիւնն սկսում է քրիստոնէութեան հաստատութեամբ եւ նորա դրոշմն է կրում իւր զարգացման ամբողջ ընթացքում: Հայոց մատենագրութեան առաջին յիշատակարանը Ս. Գրքի թարգմանութիւնն է, որի վերայ կրթուել են բազմաթիւ սերունդներ: Հինգերորդ դարից առաջ ի՞նչ քաղաքակր-

թուլթիւն ենք ունեցել, յայտնի չէ մեզ. բայց եթէ որոշ չափով հեթանոսական քաղաքակրթութիւնն եւս ունեցած լինինք, ձուլուել է քրիստոնէականի հետ: Հայոց հոգեւոր կեանքի պատմութիւնը գրեթէ նոյնանում է մեր եկեղեցու զարգացման պատմութեան հետ», ապա թէ՛ «Հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանեայց եկեղեցին է»:

Լուսամիտ եկեղեցականը Հայց. եկեղեցւոյ մասին երբեք չէ մտածած իբր անցեալէն եւ անցեալի կառոյց մը, այլ զայն ըմբռնած է իբր ուժական վայր մը, ուր կրթութիւն եւ ուսում, գրականութիւն, գիտութիւն, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, մանրանկարչութիւն, երաժշտութիւն եւ այլն զարգացած են: Անոնց վրայ է, որ աճած է եւ կրնայ աճիլ հայ ժողովուրդը: Ասիկա անցեալապաշտութիւն չէ: Ոչ ոք ըսել է թէ՛ անոր հոգիին վրայ «տգիտութեան եւ միակողմանի հասակացողութեան մառախուղը» նստած է: Համաձայն վարդապետին՝ «Յառաջդիմութիւնը շղթաների կապակցութիւն է. նոր օղակը պէտք է կապուի հնի հետ եւ այսպէ՛ս շարունակուի անընդհատ...նոր եւ ժամանակի պահանջների համեմատ քաղաքակրթութիւն ստեղծելու համար՝ պէտք է մեր նախնեաց հոգիները մեզ գործակից լինեն»:

Արդ, Հայ եկեղեցւոյ իբր հոգեւոր հայրենիք հիմքին կը գտնուի Ս. Գիրքը: Պատմութիւնը վկայ, որ զայն մեր ժողովուրդին հասցնելու նախանձախնդրութեամբ հայոց գիրերը ստեղծուեցան: Ս. Գիրքին թարգմանութիւնը անկիւնադարձային հիմնարար դէպք է, նաեւ հայ ինքնութեան վերմղիչ կարեւորագոյն տարր: Անոր ազդեցութեան ուժը ոչ թէ միայն մինչեւ այսօր կը հասնի, այլեւ դէպի ապագայ կը տարածուի:

Ս. Գիրքի թարգմանութեան վրայ պիտի ծառագարդուէր, ծաղկէր ու պողաբեր դառնար ամբողջ մշակոյթ մը: Խաւար ժամանակներուն ալ, անիկա վառ պիտի պահէր վերականգնումի յոյսը:

Աշխարհաբար բոլոր թարգմանութիւնները թէեւ համեստ մատուցումներ են, սակայն կը շարունակեն այն յոյսը վառ պահել:

Խիստ մտահոգիչ է տեսնել հայերէնին կորուստը: Արեւմտահայերէնը արդէն դասուած է մեռնող լեզուներու շարքին: Բացի հայերէնէն՝ այլ զանազան լեզուներով Ս. Գիրքի ընթերցումը օգտակար է, բայց հայօրէն զգալու ներքին իմացութիւնը պիտի բթացնէ: Ու այն բթացումը պիտի զգայազրկէ, պիտի մթազնէ շատ բան: Այս պայմաններուն մէջ, հայոց լեզուին նախանձախնդրներու դասի մը պահպանումը՝ հայ ինքնութեան համար առաջնահերթ կենսականութիւնը մը ունի: Առանց հայալեզու Ս. Գիրքին ճաշակման՝ անկարելի է հայ հոգեւոր հայրենիքին վերակերտումը:

Հայ եկեղեցին Ս. Գիրքի թարգմանութեան վրայ՝ մշակութային փոքրիկ դանձատուն դարձաւ: Անոր գանձերուն «շահարկում»ը մեզի կը խոստանայ Տիրոջ գնահատանքը, որ կ'ըսէ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի որ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատա-

րիմ՝ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ» (Մտ 25.21):

Գարեգին վարդապետ «Հոգեւոր հայրենիք»-ի հասկացողութիւնը չի սահմանափակեր: Ան չ'ըսեր, որ Հայ եկեղեցին միակ ու բացարձակ հոգեւոր հայրենիքն է հայոց: Արդարեւ, «եկեղեցին չի կարող ամբողջ հոգեւոր կեանքի ամփոփումը լինել», քանի որ անկէ դուրս եւս հոգեւոր կեանք կայ, այսինքն՝ քաղաքակրթութիւն, որուն նպատակն է ճշմարտութիւնը, բարութիւնը եւ գեղեցկութիւնը: Սակայն այս արտաքին հոգեւոր կեանքը որպէսզի կարենայ պահպանել բարոյական կատարելութեան ձգտումը՝ պէտքը ունի քրիստոնէական սկզբունքներուն, այլապէս կը մխրճուի դէպի ազնիւն ու վսեմը, դէպի առաքինին եւ մարդասիրականը անտարբերութեան մէջ:

Հետեւաբար, Հայ հոգեւոր հայրենիքի վերակերտման համար առաջին տքնաջան աշխատանքը պէտք է տարուի Հայ եկեղեցւոյ վրայ, թէ եկեղեցականութեան եւ թէ հաւատարիմ ժողովուրդին: Անոնց բարոյական եւ հոգե-իմացական որակին բարձրացումը՝ ծրագրուած եւ յարաճուն զարգացման կը կարօտի: Եւ երկրորդ՝ հայ մշակոյթի արտա-եկեղեցական բոլոր մարդակերտ ու հայակերտ արտայայտութիւններուն համար՝ հեռանկարային հոգատարութիւն պէտք է:

Այս վերակերտումին համար, մեր կառոյցները կոչուած են անմիջապէս տնտեսական կոռուսններ ստեղծելու, եւ համախմբելու մեր հոգեմտաւոր աշխարհին ուժերը:

Իսկ մեր ունեւորները:

Անոնք շարժելու են Ալեքսանդր Մանթաշեանի օրինակով, որուն բարերարութեամբ Կոմիտաս վարդապետ Գերմանիա դնաց եւ երաժշտութիւն ուսանեցաւ:

Կոմիտաս վարդապետ հայ երգը փրկեց: Ուստի, հրեշտակական երգակցութեամբ գովելի է ան: Նոյնպէս՝ իր բարերարը:

Զաքարիա մագարէն գրած է.

«Մեծ գօրծով կամ զէնքի ոյծով չէ, որ պիտի յաջողիս, - կ'ըսէ Ամենակալ Տէրը, - այլ իմ Հոգիովս:

Ո՛չ մէկ դժուարութիւն պիտի կանգնի դիմացդ, եւ նոյնիսկ եթէ լեռան մը պէս ըլլան՝ պիտի հարթուին դաշտի նման» (Զք 4.7):

Հայ հոգեւոր հայրենիքին վերակերտումով միայն՝ լեռան պէս դժուարութիւնները դաշտի նման պիտի հարթուին...:

Գառնիկ Քեհնյ. Գոյունեան

# ՀՈԳԵՒՈՐ ԿԱՅԱՆՆԵՐ

«Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝  
Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք,  
որպէսզի անով անիփ եւ փրկութեան հասնիք» Ա. Պտ 2.2:

Մեր բնաբանին ու իր շրջագիծին հիման վրայ, առանձնաբար պիտի անդրադառնամ քրիստոնէական կեանքի հիմնական երեք կայաններուն.

1. Վերէն կամ Վերստին Ծնունդին
2. Հոգեւոր Մանկութեան
3. Հոգեւոր Չափահասութեան:

Բայց առաջին այս հանգրուանէն առաջ կան չմկրտուած երախային եւ մկրտուած այսպէս ըսած «անհաւատ քրիստոնեայ»ին պարագաները: Չմկրտուած երախան վերստին չէ ծնած: Իսկ չափահասի պարագային, կարելի՞ է քրիստոնեայ՝ այսինքն մկրտուած ըլլալ առանց հաւատացեալ ըլլալու: Այո: Այդ կը նշանակէ մկրտուած ըլլալով հանդերձ իրեն տրամադրուած փրկութեան արժէքը չգիտնալ եւ զայն մերժել:

## 1. Վերէն կամ Վերստին Ծնունդ

Ջարեհ Սրբազան Ազնաւորեան կը գրէ թէ «վերստին» յունարէն բառը կը նշանակէ նաեւ «վերէն» այսինքն Աստուծմէ, Ս. Հոգիէն:

Իր շրջագիծին մէջ ծանօթանանք մեր բնաբանին: Պետրոս առաքեալ կը գրէ իր առաջին նամակի առաջին եւ երկրորդ գլուխներուն մէջ. «Որովհետեւ Աստուծոյ կենդանի եւ մշտնջենական խօսքով վերստին ծնամ, դուք, իբրեւ զաւակները ո՛չ թէ մահկանացու ծնողի մը, այլ՝ անմահին: Որովհետեւ

«Բոլոր մարդիկ խոտի պէս են,  
իրենց ամբողջ փառքն ալ՝ վայրի ծաղիկի պէս:  
Խոտը կը չորնայ եւ ծաղիկը կը թափի,  
Բայց Տիրոջ խօսքը յաւիտեան կը մնայ»:

Այս խօսքը այն Աւետարանն է, որ ձեզի քարոզուեցաւ:

Հետեւաբար մէկդի ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նեցուգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով անիփ եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէք, պիտի տեսնէք թէ քաղն է ան» Ա. Պտ 1.23-2.3:

Կը տեսնէ՞ք թէ քրիստոնեային համար որքա՛ն կարեւոր է Աստուծոյ կենդանի եւ մշտնջենական խօսքը, որ մեզի քարոզուած Աւետարանն է: Ան ուժն ունի մեզի վերստին՝ վերէն ծնունդ տալու, այսպիսով

ընդունել տարով որ մենք անմահ Աստուծոյ զաւակներն ենք: Երբ կը ճանչնանք Աստուծոյ խօսքին յաւիտեանական եւ մնայուն արժէքը, մեր կեանքերը Անոր վրայ կը հիմնենք ու կը սկսինք քաճիլ հոգեւոր այս ճանապարհին մէջ: Քրիստոնեան որքան աճի Տիրոջ ճամբուն մէջ, այնքան հաստատօրէն կը հասնի փրկութեան: Կարեւորը անգամ մը Տիրոջ խօսքին համը առնելն է: Ատկէ ետք ետդարձ չկայ: Ինչպէ՞ս կրնաս արժաթով գոհանալ երբ ազամանդին արժէքին գիտակցութիւնը ունիս: Երբ մեղրին ճաշակը ունիս, ուրիշ համ չի գոհացներ քեզ:

Յովհաննէսի աւետարանի երրորդ գլխուն մէջ Յիսուս Նիկողեմոսին կ'ըսէ. «Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին (վերէն) չձնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ Արքայութիւնը: ... Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չձնի՝ չի կրնար Աստուծոյ Արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիմ: Հովը ո՛ւր որ ուզէ՛ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ: Նոյնպէս ե՛ն բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Վերստին՝ վերէն ծնունդը ջուրէն ու Հոգիէն ծնունդն է: Մանուկը երբ կը մկրտուի՝ ջուրէն ու Հոգիէն կը ծնի, սակայն պէտք ունի զինք քրիստոնէական ճամբուն մէջ դաստիարակող բարի օրինակի: Այդ է կնքահօր դերը: Բայց եթէ աճող մանուկը անդաստիարակ մնայ եւ իր հոգեւոր կրթութիւնը չստանայ, իր խելահասութեան ընթացքին պէտք ունի գիտակցօրէն դառնալու առ Աստուած եւ վերապրելու իր վերստին ծնունդը: Այդ կրնայ պատահիլ իր մէջը ցանուած Աստուծոյ խօսքի աստիճանական կամ յանկարծակի զարթնումով, օրինակի համար զօրաւոր արկածէ մը կամ կորուստէ մը ետք, երբ անհատին ամբողջ հոգեկան աշխարհը կը ցնցուի ու կը զգայ թէ որքան զիւրաբեկ է կեանքը: Հիմա, անապահօով հոգին կը փնտռէ ապահովութեան լաստ մը ու զայն կը գտնէ իր հաւատքի նոր սլացքովը Աստուծոյ խօսքին, խոստումին ու աւետարանին մէջ, այսպիսով իր կեանքը գիտակցօրէն ամբողջութեամբ Աստուծոյ յանձնելով: Յստակ է՝ որ այդ վերստին ծնունդի կեանքը կարելի կը դառնայ միայն Աստուծոյ խօսքին վրայ հիմնուելով, անոր Աւետարանը ընդունելով: Այդպիսով է որ Աստուծոյ թագաւորութեան առջեւ կը բացուին իր հոգիին աչքերը:

## 2. Հոգեւոր Մանկութիւն

Պօղոս առաքեալ, Եբրայեցիներուն ուղղած իր նամակի վեցերորդ գլխուն մէջ հաւատքի նորածին մանուկներու յատուկ քրիստոնէական գիտելիքները կը կոչէ նախագիտելիքներ:

Ըստ անոր, այդ նախագիտելիքները կ'անդրադառնան հետեւեալ կէտերուն մասին.

— մեռելական գործերէ ապաշխարելու

- Աստուծոյ հաւատալու
- քրիստոնէական դաստիարակութեամբ մկրտուելու
- ճեռնադրութեան
- մեռելներու յարութեան
- յաւիտենական դատաստանի:

Ըստ անոր, ասոնք հիմնական գիտելիքներն են որոնց անպայման տեղեակ պէտք է ըլլայ հոգեւոր մանուկը, ինչպէս նաեւ անոնցմէ առաջին երեքը պէտք է որ գործադրած ըլլայ՝ այսինքն պէտք է ապաշխարէ մեռելական գործերէ, պէտք է Աստուծոյ հաւատայ եւ մկրտուի:

Բոլոր հանգրուաններուն համար ալ Աստուծոյ խօսքը կը մնայ առանցքը հոգեւոր աճի, ըլլայ այդ որպէս անխարդախ կաթ կամ՝ կարծր սնունդ: Մանուկը պիտի աճի Աստուծոյ խօսքով ու փրկութեան հասնի: Աստուծոյ խօսքին փափաքիլը ինքնին՝ Աստուծոյ կենսատու շնորհքն է, որ մեր մէջ թաքնուած է մեր աստուածային պատկերին հետ: Այդ փափաքը պէտք է երեւան հանել դաստիարակութեամբ եւ հոգեւորապէս առողջ ու բարի շրջապատի ազդեցութեամբ:

Միւրելիներ, խնամք տանինք հաւատքի նորածին մանուկներուն, ըլլան անոնք մանուկ թէ չափահաս հասակի: Այս մեզի կը յիշեցնէ կարեւորութիւնը, մկրտուած մանկան կամ չափահասին քրիստոնէական դաստիարակութեամբ կրթութեան ու կնքահօր դերին: Եկէք մեր մանուկներուն հոգեւոր առողջութիւնը ապահովելու համար արժանի կնքահայր/բժնորհներ, որովհետեւ անոնց ուսին կը դնենք մեր զաւակներուն հոգեւոր կրթութիւնը եւ շատ հաւանաբար հոգեւոր ապագան՝ անդենական կեանքը: Ապա մեր կեանքով, խօսքով ու գործով մեր զաւակներուն կենդանի օրինակներ դառնանք:

Պօղոս առաքեալ Գաղատացիներուն ուղղած իր նամակի չորրորդ գլխուն մէջ հետեւեալը կը գրէ. «Գիտցե՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս է՛նք՝ բնութեան ուժերուն կ'ենթարկուէ՛նք ու կը ծառայէ՛նք:» Հոս նաեւ հոգեւոր մանկութիւնը կը նմանցուի ծառայ ըլլալու, այսինքն՝ անկարող անկախ որոշում առնելու, ինչպէս որ ծառան ենթակայ է իր Տիրոջ հրամանին եւ ստիպուած՝ անոր ենթարկուելու: Ունիս ժառանգութիւն մը որ տակաւին քեզի չէ յանձնուած: Ի՞նչ պէտք է ընես ժառանգութիւնդ ստանձնելու համար:

Հապա եթէ հոգեւոր մանուկը մնայ իր երեխայական հաւատքին վրայ ու մերժէ հոգեւորապէս աճիլ:

Տեսէք թէ ինչ կը գրէ Պօղոս առաքեալ, Եբրայեցիներուն ուղղած իր նամակի հինգերորդ գլխուն մէջ. «... ձեր ականջներն ու միտքերը

բթացեր են: Արդարեւ՝ դուք պետք էր ուրիշներո՞ւն ուսուցանէիք մինչեւ հիմա, մինչդեռ դո՛ւք կրկին պետք ունիք Աստուծոյ պատգամներուն ամենատարրական դասերը սորվելու: Այլ խօսքով, կարծր կերակուրի տեղ՝ տակաւին կաթի կը կարօտիք: Որովհետեւ ով որ կաթնկեր է՝ կը նշանակէ թէ մանուկ է, եւ անձնական փորձով չի՝ գիտեր շիտակը սխալէն գանազանել:»

*Ուրեմն հոգիով մանուկը տակաւին չի գիտեր հոգեւոր փորձառութեամբ զանազանել չարն ու բարին: Ան պէտք ունի ուղեցոյցի, որ այս պարագային կրնայ Աստուծոյ խօսքը՝ Աստուածաշունչը, կնքահայրը կամ հոգեւոր խորհրդատու մը ըլլալ: Ան աւելի սայթաքումներու ենթակայ է քան հոգեւորապէս չափահասը, քանի հոգեւոր գետնի վրայ տակաւին փորձառու չէ:*

### 3. Հոգեւոր Զափահասութիւն

*Վերը, Պօղոս առաքեալ անչափահաս ժառանգորդը՝ մանուկը նմանցուց ծառայի, իսկ ինչի՞ կը նմանցնէ չափահասը: Պօղոս առաքեալ կը շարունակէ. «Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհի դրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքի գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ դրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Աբբա», այսինքն «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ՝ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:» Գղ 4.1-7*

*Անչափահասութիւնը՝ մանկութիւնը ծառայ ըլլալու կը նմանցուէր, իսկ հիմա հոգեւոր չափահասութիւնը կը նմանցուի Աստուծոյ որդի՝ զաւակ դառնալու եւ մեր սրտերուն մէջ ընդունելու Քրիստոսի Հոգին, որով զԱստուած «աբբա» այսինքն «Հայր» կը կոչենք, մէկ խօսքով՝ մեր սրտերուն մէջ անդադար հաղորդակցութեան մէջ ըլլալու Աստուծոյ հետ:*

*Բայց այդ ինչպէ՞ս կը պատահի: Շատ յստակ է թէ այդ փրկութիւնը ճշի կը բաշխուի եւ թէ այդ Աստուծոյ մեզի երկարած ձեռքն է իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մարդեղութեամբ ու զոհաբերութեամբ: Ուրեմն հոգեւոր մանկութենէ չափահասութիւն անցումը գիտակցօրէն ընդունելն է ու բացուելը Աստուծոյ ներգործութեան առջեւ, Քրիստոսի Հոգիին՝ Սուրբ Հոգիին «աբբա» կանչող ձայնին ականջալուր ըլլալն է ու անոր հնազանդիլը:*

*Մէջբերեցի Պօղոս առաքեալի խօսքը որ կ'ըսէր. «Որովհետեւ ով որ կաթնկեր է՝ կը նշանակէ թէ մանուկ է, եւ անձնական փորձով չի՝ գիտեր շիտակը սխալէն գանազանել:» Ան կը շարունակէ. «Մինչդեռ կարծր կերակուրը չափահասներուն համար է, որոնք վարժութեան ճամբով կրթած են չարն ու բարին գանազանելու իրենց զգայարանքը:» Եբբ*

Ուրեմն հոգեւոր չափահասը այն է որ վարժութեան ճամբով կրթած է չարն ու բարին զանազանելու իր զգայարանքը... այսինքն հոգեւոր փորձառութեան վրայ յենելով օրէ օրէ կ'աճի եւ բարին ու չարը զանազանելու իր կարողութիւնը կը սրէ: Այսպիսով օրէ օր Աստուծոյ թագաւորութեան խորքին աւելիով կը թափանցէ: Այո, հոգեւոր չափահասութիւնը ամէն բանէ աւելի կեանք է, ամենօրեայ պայքար եւ հոգեւոր փորձառութիւն վաստկելու ճակատամարտ: Քրիստոնեան կ'իյնայ, բայց նաեւ զիտէ որ յաղթանակը արգէն տարուած է... իրեն միայն կը վիճակուի վերստին կանգնիլ, վերանորոգուիլ Աստուծոյ շունչով ու պայքարը շարունակել:

Վերջապէս, Պողոս առաքեալ, հոգեւոր չափահասութիւնը կապելով Աստուծոյ ճանաչողութեան հետ, Կորնթացիներուն առաջին նամակին մէջ կը գրէ. «Երբ երեխայ էի՝ երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի. իսկ երբ տղամարդ դարձայ, բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի: Նոյնպէս ալ, մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն. բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ գայն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը փնտրեմք զԱստուած, բայց այն ատեն պիտի փնտրեմք ամբողջապէս, ճիշդ ինչպէս ի՛նք գիտ կը փնտրեմք:» Ա կր 13.11-12

Ուրեմն մինչեւ այն ատեն որ այս մարմինն մէջն ենք, որքան որ ալ հոգեւորապէս աճած ըլլանք տակաւին մանուկ ենք բաղդատած այն վիճակին որ մեզի խոստացուած է յաւիտեանականութեան՝ Աստուծոյ կատարեալ ճանաչողութեան մէջ: Այդ բացարձակ վիճակին մէջն է միայն որ հոգեւոր աճումը առանց Ֆիզիքական արգելքի պիտի թուչի ու հասնի Աստուծոյ ճանաչողութեան նոր բարձունքներու: Այն ատեն է որ հոգեւոր չափահասութիւնը սահման պիտի չունենայ: Մինչդեռ հիմա մեր հոգեւոր աճը սահմանափակ է:

Մինչ այդ մեզի կը մնայ արթնութեամբ ընթանալ մեր քրիստոնէական հաւատքին ճամբով: Հիմա դէմ առ դէմ չենք տեսներ, այլ կը տեսնենք հաւատքի աչքերով: Ուրեմն մեզի վստահուած է պահպանել ու զարգացնել մեր ու հաւատքի նորածին մեր մանուկներու հաւատքը, որպէսզի երբ հասնի դէմ առ դէմ կենալու պահը, պատրաստ ըլլանք ամբողջականօրէն վայելելու Աստուծոյ մեզի խոստացած լիութիւնը:

Խօսքս կը փակեմ Աստուածաշունչէն առնուած մանուկ Սամուէլի դրուագով.

Սամուէլ մանուկը Հեղիին մօտ Տիրոջ կը ծառայէր: Այն օրերը Տերոջը խօսքը հագուագիւտ էր ու յայտնի տեսիլք չկար: Օր մը Հեղի իր տեղը պառկեք էր (անոր աչքերը սկսեք էին ծանրանալ ու չէր կրնար տեսնել): Եւ Աստուծոյ կանթեղը տակաւին մարած չէր ու Սամուէլ կը

քանակը Տիրոջ տաճարին մէջ, ուր Աստուծոյ տապանակը կար: Տէրը կանչեց Սամուէլը ու անիկա «հոս եմ», ըսաւ: Եւ Հեղիին վագելով՝ ըսաւ. «ահա հոս եմ. քանզի զիս կանչեցիր»: Ու անիկա ըսաւ. «ես չկանչեցի. դարձի՛ր պառկէ»: Ան ալ դարձաւ պառկեցաւ: Տէրը անգամ մըն ալ կանչեց. «ո՛վ Սամուէլ» ու Սամուէլ ելաւ Հեղիին գնաց ու ըսաւ. «ահա հոս եմ. զիս կանչեցիր»: Ու անիկա ըսաւ. «որդեակ իմ, ես չկանչեցի, դարձի՛ր պառկէ»: Եւ Սամուէլ տակաւին Տէրը չէր ճանչնար ու Տիրոջ խօսքը դեռ անոր յայտնուած չէր: Նորէն երրորդ անգամ Տէրը կանչեց. «ո՛վ Սամուէլ» ու Սամուէլ ելաւ Հեղիին գնաց ու ըսաւ. «ահա հոս եմ. զիս կանչեցիր»: Հեղի իմացաւ թէ Տէրն է մանուկը կանչողը: Ուստի Սամուէլին ըսաւ. «գնա՛ պառկէ ու եթէ անգամ մըն ալ քեզ կանչէ, ըսէ՛ ,ո՛վ Տէր, խօսէ՛, քո ծառայ մտիկ կ'ընէ»: Սամուէլ գնաց իր տեղը պառկեցաւ: Տէրը եկաւ կայնեցաւ ու առաջին անգամներուն պէս «Սամուէլ՛, Սամուէլ՛» կանչեց ու Սամուէլ ըսաւ. «խօսէ, Տէ՛ր, քո ծառայ մտիկ կ'ընէ» Ա ԹԳ 3.9:

*Հողեւոր կեանքի մէջ, ըլլանք մանուկ թէ չափահաս, Աստուածաշունչի ճամբով կամ արթուն հողեւոր փորձառութեամբ՝ Աստուած մեզ մեր անունով կը կանչէ ամէն բոլորէ: Ականջ տանք անոր ձայնին, մտիկ ընենք, լսե՛նք, ճանչնա՛նք իր կանչը ու մեր պատասխանը թող յստակ ըլլայ. «խօսէ՛, Տէ՛ր, քո ծառայ մտիկ կ'ընէ»:*

Կարօ Նոյսուտեան



# ԱՇԽԱՐՀԻ ԾԱՆՕԹ ՏՈՄԱՐՆԵՐԸ

## ԹՈՒԱԿԱՆ

Ձանազան ժողովուրդներ իրենց տոմարին հաշիւները ընկելու համար ընտրած են թուական մեկնակէտ մը, որ կը ներկայացնէ յիշատակելի դէպք մը:

Յոյներու համար այդ թուականը կապ ունէր Ողիմպիական Խաղերու հաստատման հետ: Ողիմպիականը չորս տարին անգամ մը տեղի ունեցող տօնախմբութիւն մըն էր, որ հիմնադրուած էր ի յիշատակ կամ ի պատիւ Արամազդի: Առաջինը, որուն գործադրումը կամ կազմակերպումը կը վերագրուի Հերքիւլէսի, ճշգրիտ թուական չունի: Վերահաստատումը կատարուած է Իփիտոս թագաւորին կողմէ Ն. Ք. 884 թուականին: Սակայն, Ն. Ք. 776 թուականէն սկսեալ, դարձած է հերթական կանոնաւոր տօնախմբութիւն եւ նկատի առնուած է իբրեւ ժամանակագրութեան մը կամ տոմարի մը հիմը:

Հռովմէական թուականին մեկնակէտն է Հռոմ քաղաքին հիմնումը: 767-747 թուականները առաջարկուած են զանազաններու կողմէ, սակայն, ընդհանրապէս ընդունուած է Վարրոնի հաստատումը Ն. Ք. 21 Ապրիլ 753:

Իսլամական թուականին սկիզբն է Մուհամմէտ մարգարէին գաղթը (Հէճիրա, Հիժրա) Մէքքէէն Եմթրէպ, որ վերակոչուեցաւ Մատինէթէլ-Նապի (մարգարէի քաղաք), կարճ՝ Մէտինէ: Այս դէպքը տեղի ունեցաւ Ուրբաթ, 16 Յուլիս 622ին (քրիստոնէական տոմարով):

Քրիստոնեայ աշխարհը մինչեւ Զ. դար ընդհանրական օրացոյց մը չունէր (Իւրաքանչիւր ժողովուրդ կը գործածէր իր ասանդական օրացոյցը): 522 թուականին, Տրոնիսիոս կամ Տրնի Փոքր (Կոտակ անունով) լատին արեղայ մը հաշիւներ կատարելով, ենթադրեց թէ Յիսուսի ծնունդը տեղի ունեցած ըլլալու է Հռովմէական թուականի 753րդ տարուան Դեկտեմբեր 25ին:

Սիւլաներ սպրդած էին իր հաշիւներուն մէջ, կամա՞յ թէ ակամայ, չենք գիտեր: Յիսուսի ծննդեան օրը 7 օր աւելի ուշ էր — Յունուար 1ին: Յիսուս 4 տարի աւելի կանուխ ծնած էր եւ 36 տարեկանին խաչուեցաւ եւ ոչ թէ 33 տարեկանին:

Հայերս ունեցած ենք երկու թուական.

1) Հայկայ Թուական կամ Բուն Թուական Հայոց, որուն սկիզբը նկատուած է Հայկ Նահապետի տարած յաղթանակը Բելի վրայ, յաղթանակ մը, որ ըստ Հայր Ղեւոնդ Ալիշանի հաշուամենբրուն, տեղի ունեցած է Ն. Ք. 2492 թուականին:

2) Հայոց Մեծ Թուական, որ սկիզբ առած է Յուլիս 11, 552ին: Այս

Թուակահանին որոշումը կապ չունի յիշատակելի մասնաւոր դէպքի մը հետ: Ծրանսական Յեղափոխութիւնը (1789) ուրիշ նորութիւններու կարգին կ'ուզէր որդեգրել նոր օրացոյց մը եւ թուական մը: 22 Սեպտեմբեր 1792ը, Ծրանսական Հանրապետութեան հռչակման օրը, կը հռչակէր նոր թուականին սկիզբը:

## ՅՈՒԼԵԱՆ ՏՈՄԱՐ

Հռովմէական կայսրութեան եւ անոր յաջորդող պապականութեան դերը մեծ ըլլալով մեր գործածած տոմարի հաստատումին մէջ, պարտաւոր ենք առանձապէս անդրադառնալ անոր:

Ենթադրութիւններ կան թէ սկզբնապէս եւ Ռոմուլոսի շրջանին (Հռոմ քաղաքի աւանդական հիմնադիրներէն) հռովմէական տարին կը բաղկանար 10 ամիսէ եւ 360 օրէ: Ունէր անհաւասար երկարութեամբ ամիսներ: Նոր տարին կը սկսէր Մարտէն:

10 ամիսէ բաղկացած ըլլալուն իբրեւ ապացոյց կը նշուին Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր բառերը, որոնք 7րդ, 8րդ, 9րդ եւ 10րդ ամիսները ցոյց կուտան:

Բարեփոխման պահանջը կը մղէր Նումա Պոմպիլիոսը գործի անցնելու: Կ'առաջարկէ 355 օրով եւ 12 ամիսով բաղկացած տարին: Տարուան առաջին ամիսն էր Յունուարը, իսկ վերջինը՝ Փետրուարը: Ամիսները ունէին 28, 29 եւ 31 օր: Նումա նկատի առած եւ օրերու յաւելումներ առաջարկած էր արեւուն եւ լուսնին օրերը համաձայնելու համար:

Ն. Ք. Ա. դարուն Յուլիոս Կեսար ուզեց բարեփոխութիւն մտցնել եւ նոր տոմարը իր անունով կոչուեցաւ Յուլեան տոմար: Գործին գիտական մասը կը պատկանի արիքսանդրացի աստղագէտ Սոսիգենէսին: Հռովմէական արեգակնա-լուսնային տարին դարձաւ արեգակնային: Աստղագէտը արեգակնային տարին հաշուած էր 365 օր եւ 6 ժամ (քառորդ օր): Կեսար հրամայեց առաջին երեք տարիները հաշուել 365 օր, իսկ չորրորդ տարին, որ նախանջ տարի կոչուեցաւ, 366 օր (4 տարիներու քառորդ օրերու յաւելումը վրան գումարուած): Սակայն սովորական տարին արեգակնայինէն 11 վայրկեան եւ 11 երկվայրկեան աւելի է, որ 128 տարուան ընթացքին կը յառաջացնէ մէկ օրուան (24 ժամ) տարբերութիւն:

Միջանկեալ ըսենք, որ այս բարեփոխութիւնը կատարուեցաւ Ն. Ք. 46 թուականին: Նախկին սխալները սրբագրելու համար, Կեսար հրահանգեց որ բարեփոխումի հռչակուած տարին ունենայ 445 օր: Այդ տարին կոչուեցաւ շփոթութեան տարի: Սկսաւ 13 Հոկտեմբեր 47էն եւ տեւեց մինչեւ 45 թուականի Յունուար 1ը:

Նոր Յուլեան տոմարով՝ տարին կը բաղկանար 12 ամիսէ եւ որոշ օրերէ: Փետրուար ամիսը կը տեղափոխուէր եւ կը յաջորդէր Յունուար ամսուն: Փետրուար կ'ունենար 28 օր, իսկ նահանջ տարուան պարագային՝ 29 օր:

Այս մեծ բարեփոխութեան յիշատակը պահելու համար, Մարկոս Անտոնիոս հրամանագիրով մը հռովմէական հին հինգերորդ ամիսը (Quintilis) կոչեց Յուլիս, Յուլիոս Կեսարի անունով: 30 տարի ետք՝ Օգոստոս կայսր իր անունով կը կոչէր վեցերորդ ամիսը՝ Օգոստոս:

Յուլեան տոմարը գործադրութեան գրուեցաւ ամբողջ հռովմէական կայսրութեան մէջ: Նիկիոյ տիեզերական ժողովը (325) զբաղեցաւ տոմարի հարցով: Եկեղեցւոյ հայրերը ընդունեցին զայն՝ փոքր փոփոխութիւններ մտցնելով: 11 վայրկեանի տարբերութիւնը, տարիներու ընթացքին, յառաջացուցած էր 2 օրուան տարբերութիւն: Ժողովը թուականը երկու օր առաջ տարաւ: Նահանջ նկատեց այն տարիները որոնք 4ով բաժանելի են:

## ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՈՄԱՐ

Նիկիոյ ժողովէն 1257 տարի ետք՝ 1582ին 11 վայրկեանի եւ 11 երկվայրկեանի տարբերութեան գումարը աւելնալով եղած էր 10 օր: Այնպէս որ 1582ին, գարնան գիշերահաւասարը կուգար Մարտ 11ին, փոխանակ Մարտ 21ին: Գրիգոր ԺԳ. պապը գարնան գիշերահաւասարը փոխադրեց Մարտ 21ին, ինչպէս որ եղած էր Նիկիոյ ժողովին գումարման տարին: Զեղչեց 10 օր եւ հրամայեց որ Հոկտեմբեր 5ը այդ տարի 15 հաշուուի: Յառաջիկային՝ նոյնպիսի սխալներէ զերծ մնալու համար, հրամայեց որ ամէն 460 տարուան ընթացքին, երեք նահանջ տարի պակաս հաշուուի: Հաշիւի բանալի՞ն: Դարագլուխի տարիները միայն ա՛յն ատեն նահանջ սեպուին, երբ դարերը ցուցնող թիւը 4ով բաժանելի է: Այսպէս՝ 1600 տարին նահանջ եղաւ: 2000 թուականն ալ նահանջ պիտի ըլլայ, բայց ո՛չ 1700, 1800 եւ 1900 տարիները, որովհետեւ 17, 18 եւ 19 թուականները 4ով բաժանելի չեն:

Հակառակ այս կարգադրութիւններուն եւ նախատեսուած սրբագրութիւններուն եւ առաջարկներուն, Գրիգորեան տոմարը տակաւին ունէր փոքր թերութիւն մը: Յուլեան տոմարով՝ 400 տարուան մէջ յառաջ կուգար 3.12 օրուան սխալ մը: Գրիգորեան տոմարը, նոյն ժամանակաշրջանի սխալը կ'իջեցնէր 0.12 օրուան, բայց չէր անհետացնէր, այնպէս որ, 4000 տարուան ընթացքին՝ պիտի վերածուի մէկ օրուան:

Յուլեան եւ Գրիգորեան տոմարներուն տարբերութիւնը, որ 1582ին 10 օր էր, 1700ին եղաւ 11 օր, 1800ին՝ 12, 1900ին՝ 13 օր: 2000 թուականին պիտի ըլլայ 14 օր:

Յուլեան տոմարը երբեմն կը կոչուի հին տոմար եւ կը կիրարկուի Երուսաղէմի մեր Պատրիարքութեան կողմէ: 1924ի Յունուարէն ի վեր Հայաստանեայց Եկեղեցին որդեգրած է Գրիգորեան տոմարը: Հայկական տոմարը գրեթէ մոռացութեան տրուած է ներկայս:

Ա. Տէր Խաչատուրեան

# ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՄԷՁ

Յայտնի է թէ հայերը հայրենասէր ժողովուրդ մըն են: Այդ իրողութիւնը շօշափելի դարձնելու մտքով այստեղ կը ներկայացնենք շքեղ մանեակ մը՝ կազմուած հայ բանաստեղծներու կերտած շողշողուն գոհարներէն: Դասաւորումը կատարուած է հեղինակներու մականուններուն ալբուրբենական կարգին համաձայն:

*Հայոց աշխարհիկ, դարո՛ւնդ է հասել,  
Ահա գեղեցիկ դարուն քո եկել.  
Ո՛վ դու ի վաղուց մոռցուած Հայրենիք,  
Ո՛վ դու իմ սըրտիս անմոռաց տեսիլք:*

Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան

\* \* \*

*Ձեզ կ'ասեմ, մանկունք սիրունք նագելիք,  
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ,  
Մ'ուրանայք գերկիրդ ու զազգըդ սիրուն,  
Ծառն՝ արմատով ծառ, տունն՝ հիմամբն է տուն:*

Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան

\* \* \*

*Քու հողին մեռնեմ, անգին Հայրենիք,  
Ա՛խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ,  
Երնէ՛կ ունենամ հազար ու մի կեանք,  
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ:*

Աւետիք Իսահակեան

\* \* \*

*Իմ Հայրենիք զիս կը կանչէ,  
Հեռու եմ Հայաստանէն.  
Հայու որդւոյն կը վայելէ՞<sup>օ</sup>  
Հեռանալ Հայաստանէն:*

Արմենակ Հայկունի

\* \* \*

*Հայրիկն ասաց. Իմ հայրենեաց  
Փուշն անուշ է քան ըզվարդ.  
Ես այն փրշոց մէջը դարձեալ  
Կը որոնեմ սիրուն վարդ:*

Հայրապետ Ճանիկեան

\* \* \*

Հայաստան, երկիր դրախտավայր,  
Դու մարդկայնոյ ցեղիս օրրան,  
Դու ես բնիկ իմ Հայրենիք,  
Հայաստան, Հայաստան, Հայաստան:  
Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ  
Ոգեւորի ի նոր խրախոյս,  
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,  
Ի քեզ, ի քեզ, յո՛յս իմ միայն,  
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Յովհան Միրզա-Վանանդեցի

\* \* \*

Հայաստան, իմ քաղցր Հայաստան,  
Ոգիքս յանունդ հալեցան.  
Մինչեւ ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,  
Սըրտիս իմ ե՞րբ լցցի ուխտ:

Խորէն Եպս. Նարպէյ

\* \* \*

Հայաստան իմ, սո՛ւրբ Հայաստան,  
Հոգւոյս պայծառ յիշատակ,  
Է՞ր թողեր զիս ի բացական  
Վայր դառնաշունչ, դըժընդակ.  
Մաշիմ, մաշիմ ես աստանօր,  
Ընդ աստեղօք հիւսիսի,  
Հալիմ աւա՛ղ ես չըքաւոր,  
Ո՛հ, Հայրենիք քաղցրալի...:

Սմբատ Շահազիզեանց

\* \* \*

Ու երբ կարօտ իմ Հայրենիքից  
Օտար մի երկրում ընկնեմ անմուրազ,  
Հողմե՛ր, հայրենի մեր սուրբ դաշտերից  
Մի բուռ հո՛ղ բերէք, շաղ տուէք վրաս:

Յովհաննէս Ծիրազ

\* \* \*

Ո՛հ, Հայաստան, Հայաստան,  
Դեռ աչքս ըզքեզ չըտեսան,  
Որ օտարի տանն եմ հիւր.  
Բայց թէ կանգուն թէ կործան՝

Հողդ ինձ քաղցր է, Հայաստան,  
Օդդ ինձ սուրբ է, Հայաստան:

Յակոբ Ոսկան

\* \* \*

Ուր էլ լինեմ, չեմ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր,  
Ձեմ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր,  
Ինչքան էլ սուր սիրտըս խոցեն արիւնաքամ վէրքերը մեր,  
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան եարն եմ սիրում:

Եղիշէ Չարեց

\* \* \*

Օտար թէեւ չնչեմ ես օդ,  
Ցաւօք սահեն իմ օրեր,  
Քեզ Հայաստան սիրակարօտ,  
Սիրտըս համայն քեզ նուէր.  
Օտարութիւն դու փուշ ես,  
Այլ Հայրենիք, դու վարդ ես:

Մկրտիչ Պէշիկթաշլեան

\* \* \*

Դուն դըրախտն ես, քեզի Սուրբ Գիրքը վկայ,  
Քու միջիցըդ անմահութեան հոտ կուգայ,  
Հազար ափսոս, լուսաւորուած չեն հիմայ,  
Ժողովուրդդդ, զաւակներդդ, Հայրենիք:

Աշուղ Զիւանի

\* \* \*

Ամէն Հայի սըրտի համար  
Ուրախութիւն, իմ Հայաստան,  
Ճամփաներում հեռու խաւար  
Դու լոյսի սիւն, իմ Հայաստան,  
Ձաւակներուդ ճախորդ օրին  
Դու միշտ արթուն, իմ Հայաստան,  
Դէպի քո գիրկ ետ դարձողին  
Հարազատ տուն, իմ Հայաստան:

Գ. Սարեան

\* \* \*

Հաւաքեց՝ Ն. Արք. Ծովական

# ԳԻՒԱՊԱՏՈՒՄ

Վաղուց ցանկանում էի գրել ինձ հետ պատահած մի տարօրինակ դէպքի մասին, բայց չէի համարձակում: Չհասկացուելու կամ ծաղր ու ծանակի ենթարկուելու միտքը արգելք էր լինում գրիչը ձեռք առնելու:

Ի վերջոյ իմ լաւ բարեկամ Էդգարը սովորեցրեց ինձ կարեւորութիւն չընծայել ուրիշների կարծիքին, երբ ասածդ կամ արածդ հիմնուած է անկեղծ զգացումների եւ անձնական կարեւոր փորձառութիւնների վրայ, մանաւանդ երբ դրանք ծառայում են ինչ-որ թաքնուած ճշմարտութիւն բացայայտելու:

Հետեւաբար, իմ պատմածը գուցէեւ շատերին արտառոց թուայ, հիւանդագին երեւակայութեան արդիւնք, զգայախաբուութիւն կամ պարզապէս՝ մի երազ, այդուհանդերձ դա առնչուած է մի տխուր իրականութեան հետ, որի գոհերն ենք յաճախ, որի մասին շատ անգամ անգիտանում ենք կամ էլ չենք ուզում ընդունել նրա գոյութիւնը:

Խօսքն այստեղ վերաբերում է չարի առկայութեանը մեր կեանքում, որը կրօնական բացատրութեամբ մարմնաւորուած է սատանայի կերպարանքում: Այս վերջինն ունի իր ժրջան գործակալներն ու դեսպանները, որոնք կազմում են դեւերի հսկայածաւալ զանգուածը: Դրանց բոլորի նպատակն է մարդկանց գայթակղեցնելը, ստախօսութիւն, վէճ, կռիւ, խռովութիւն, մահ եւ ատելութիւն սերմանելը, ապա՝ մարդկային այդ թշուառութիւնների վրայ դիւային հրճուանքով բրբջալը:

Չարը նոյնիսկ փորձեց գայթակղեցնել Քրիստոսին, բայց յաջողութիւն չգտաւ: Նա չի կարող երբեք յաղթել Աստծոյ հետ քայլող հաւատացեալներին: «Քաջամարտիկները կռուելով՝ յաղթում են նրան: Նրա առաջին յաղթանակի պարծանքը այժմ վերացւում է այնպիսի մարդկանց կողմից, որոնք լաւ բաների ձգտումով նրան պարտութեան են մատնում: Որովհետեւ սատանան մեր ոտքերի տակ տրորուելով՝ կը կործանուի ու մեռած կը փութի՝ լաւ բաների մեր ձգտումից պարտութեան մատնուած» (Եզնիկ Կողբացի, Եղծ Աղանդոց):

Երբ հեռանում ենք Աստծոց՝ ինքնաբերաբար զրկուած ենք բարի ուժերի պաշտպանութիւնից ու շրջապատուած դեւերով, որոնք մեզ դրդում են ամէն տեսակ գարշանքներ գործելու՝ սկսած ստախօսութիւնից ընդհուպ մինչեւ պոռնկութիւն եւ մարդասպանութիւն: Այդպիսի մի իրավիճակում էր, որ ես չսպասուած մի օր, դէմ յանդիման գտնուեցի սատանայի զազրատեսիլ կերպարանքին: Միգուցէ ընթերցողն այստեղ սկսի ծիծաղել ասածիս վրայ, բայց ես նրանում ոչինչ չեմ գտնում գաւեշտի արժանի, այլ, ընդհակառակը, նրանով բացուած է մի տխուր իրականութեան խորամանկօրէն սքօղուած երեսը:

Արտասովոր իրավիճակ էր: Մեր հոգիները ծանրացել էին շուայ-

տուժեամբ եւ աշխարհիկ հոգսերով այն աստիճան, որ յարմար առիթ չէինք գտնում կամ ախորժակ էլ չունէինք աղօթելու: Ժողովուրդը տնտեսապէս ծայր աստիճան թշուառութեան մէջ էր: Տրտի, սովի, խաւարի, անգործութեան եւ անորոշութեան օրեր էին: Երկիրը դարձել էր անկախ պետութիւն: Ենթադրուում էր, թէ ընտրութիւնները բոլոր մակարդակներում պէտք է լինէին ժողովրդավարական սկզբունքներով, բայց խարդաւանքներն ու ներանձնական հաշիւները գերակշռող էին:

Ամէն ինչ ձեռքից գնում է, մտածում էի, այս խեղճ ժողովուրդը այս օրերին կարիք չունի ոչ մեր աղօթքին եւ ոչ էլ՝ քարոզին: Նրան այլեւս ամենեւին չի հետաքրքրում, թէ ո՞վ կը լինի երկրի նախագահ կամ կաթողիկոս: Նա հացի կարօտ է, աշխատանք է ուզում եւ արժանապատիւ կեանք: Դժբախտաբար հնարաւոր չէ հասնել բոլորի կարիքներին, իսկ շատ անգամ էլ ղեկավար դիրքերի վրայ գտնուողները բոլորովին անտարբեր են ուրիշների տառապանքի նկատմամբ:

Մի բան էի մոռանում, որ բարեխիղճ եկեղեցականի մաքուր սրտից բխած աղօթքը, նրա կատարած ծոմապահութիւնն ու սրբանուէր կենցաղը կարող են բացել երկնքի ողորմութեան դռները, հրաշքներ գործել իր երկրի եւ ժողովրդի համար:

Աշխարհիկ հոգսերով ծանրաբեռնուած մտքով, առանց աղօթելու ախորժակ ունենալու, մտայ անկողին: Պարզկայ գիշերուած լուսնի տարտամ շողքն ընկել էր սենեակումս: Դեռ չէի քնել: Յանկարծ զգացի, որ աջ կողմս գտնուող բազկաթոռին նստած է ինչ-որ մէկը եւ խորհրդաւոր կերպով նայում է ինձ: Առաջին վայրկեանին կարծեցի, թէ երազ է եմ տեսնում, բայց երբ փորձեցի մի քիչ շարժուել՝ լսեցի մահճակալիս ճռճոցը, հասկացայ, թէ արթուն վիճակում եմ: Բայց ո՞վ է արդեօք այս մարդը. դէմքն ինձ ծանօթ էր, սակայն ինքնութիւնը չէի յիշում: Առաջին հայեացքից նա շատ նման էր ինձ երբեմն այցելող այն «սարկաւագին», որը ժամանակին սպաննել էր մի եպիսկոպոսի, ապա ինձ թուաց, թէ նա աչալրջութեան տաճարի ինձ ծանօթ գործակալներից մէկն է:

Այդ անկոչ հիւրը չհասկացայ, թէ ինչպէս էր մտել սենեակս ու տեղ դրաւել իմ բազկաթոռին: Նա տարօրինակ կերպով նայում էր ինձ, նայուածքն ահաւոր էր, բայց զարմանալիօրէն լիաշուրթն ծիծաղում էր: Իսկ ինչքան ծիծաղում էր՝ ես էլ այնքան աւելի զարհուրում էի: Սկսեցի ուժեղ գոռալ եւ մէկէն միտքս ընկաւ Յիսուսի անունը կանչել, քանզի գիտէի, եթէ նման պարագաներում, նա, ով տալիս է նրա անունը՝ փրկուում է: Եւ, իսկապէս էլ, անմիջապէս որ հնչեց մեր Տիրոջ սուրբ անունը՝ այդ նենգաւոր եւ դժնատեսիլ արարածը, դեւերի այդ դուրսապրծուկը, անյայտացաւ ու չկարողացաւ յաղթանակ տօնել: Բայց ես սարսափից դողում էի, սկսեցի աղօթել, մտաբերել սովորածս աղօթքները: Բաւական ժամանակ յետոյ մի հանգիստ ու խաղաղ քուն պատեց աչքերս:

Ինձ ասել էին, թէ սրբավայրերի մթնոլորտը սուրբ է, քանզի նրան-

ցում ապրած հրաշագործ մարդկանց խնկանուէր աղօթքները չարքերից ու չարիքներից ապահովել էին այդ վայրերը: Դեւերն այնտեղ փակուած էին մնում իրենց անդնդախոր արգելարաններում, որոնց վրայ դրուել էր սրբերի յաղթական կնիքը: Բայց, ըստ երեւոյթին, սրբերի զօրութիւնը միշտ հեռանում է այն սրբավայրերից, երբ նրանցում բնակուողները ամենից առաջ իրենց հոգին սրբավայրի չեն վերածել: Այդ պատճառով էլ խորտակուած են սանդարամետականների վրայ դրուած անշարժութեան կնիքները, եւ բազմատեսակ ու զազարտեսիլ դեւերի հոյւերը դուրս են պրծնում, դառնում ազատ եւ անկախ:

Օրեր անց տաղնապահար հոգիս ըստ բաւականին գտաւ իր անդորրը՝ նման ուժեղ փոթորիկից յետոյ հանդարտուող ծովի, միայն թէ երբեմն այդ գիշերուայ իմ տեսածի յուշը ցնցում էր էութիւնս: Դա էլ ժամանակի ընթացքում մեղմացաւ՝ շնորհիւ կատարած աղօթքներիս ու սրբախորհուրդ խոկումներիս, քանզի դեւերն հալածուած են մեր մաքուր մտածումներից, իսկ բազմապատկուած՝ պիղծ մտալլուումներից: Այս բոլորի վրայ պէտք է աւելացնել նաեւ այն, որ սատանան սկսում է տօնել իր յաղթանակը հէնց այն ըոպէից, երբ հաւատացնում է մեզ, թէ ինքը գոյութիւն չունի:

Այդ օրերին նաեւ պատրաստուում էի այցելութեան գնալ իմ լաւ բարեկամներից մէկին, որն ապրում է Համբուրգ քաղաքում: Պրագայի վրայով հասնում եմ այնտեղ: Ընկերս մի հոյակապ հիւրանոց էր ապահովել ինձ համար բնութեան հրաշալի գրկում, շրջապատուած ծառաստանով ու գեղեցիկ մարգագետիններով:

Յաջորդ օրը ընկերոջս հետ սկսում ենք այցելել քաղաքի տեսարժան վայրերը: Կանգ ենք առնում Համբուրգի Մայր եկեղեցու առաջ, որ կրում է անունը Ս. Միքայէլ հրեշտակապետի: Գլխաւոր մուտքի վերեւում, արտաքին կողմից գետեղուած է հրեշտակապետի բրոնզեայ հսկայ արձանը եւ, ի զարմանս ինձ, նրա ոտքերի տակ տրորուած կայ գետնաքարչ վիճակում ինչ-որ մի արարած: Ողջ էութեամբս սառսուռ է անցնում, երբ նկատում եմ, որ ոտնատակ արուած այդ արարածը բոլորովին յար եւ նման է օրեր առաջ իմ սենեակում յայտնուած ահագնադէմ այն նողկալի մարդուն, որն հալածուեց շնորհիւ մեր Տիրոջ անուան ոգեկոչման:

Ուրեմն, շատ պարզ է, որ ես այն գիշեր գտնուելիս եմ եղել դէմ յանդիման սատանայի: Արդարեւ, տիեզերքի անհաշիւ գեղեցկութիւնների եւ մարդկային հոգեկան վեհութիւնների կողքին գոյութիւն ունի մուսյլ եւ մի ահաւոր իրականութիւն, մի քայքայիչ աններդաշնակութիւն, ուր տառապանքն անպակաս է. դա չարի ու նրա կործանարար ուժերի տիրապետութիւնն է: Այդուհանդերձ, այդ ուժերին չենթարկուելը կամ նրանցից ձեռքազատուելը կախում ունի մեր կամքից: Դրա համար էլ հարկ է սպառազինուել հաւատքի զրահով, աղօթքի եւ սրբանուէր կենցաղի չարխափան զօրութեամբ, այլապէս ողբալի կը լինի մեր կոր-

ծանուճը, աներեւակայելիօրէն զարհուրելի՝ անձնատուր դժոխային  
գարշանքների:

Երբ մեզ ամբողջութեամբ յանձնում ենք Աստուծոյ հայրական  
խնամքին եւ քայլում նրա կենսապարգեւ պատուիրանների համաձայն,  
այն ժամանակ նա էլ կ'ուղարկի իր դիւամարտ հրեշտակապետին, որ  
գլուխն անցած իր հրեղէն զօրագնդի՝ ոտնակոխ կ'անի, իսպառ կը ջախ-  
ջախի մեր փրկութեան սպառնացող դժնատեսիլ հրէշների մահաթոյն  
զանգուածներին:

Յակոբ Արք. Գլնեան  
Մօնթէվիտօ - Ուրուկուայ



# «Յօդուածներու ժողովածոյ», Բ. հատոր, Մոնրթէալ 2011 հեղինակ՝ Բարգէն Թօփճեան

Բարգէն Թօփճեան Հայ գիրին Համեստ եւ մնայուն կերպով պարտա-  
ճանաչ ու նուիրեալ սպասաւորն է, թէ՛ իբր գրող եւ թէ՛ իբր խմբագիր:

Անոր վաստակը սկիզբէն մինչեւ այսօր՝ առհասարակ ծանօթացնելու  
առաքելութիւն մը եղած է: Ահա իր վերջին գիրքը՝ նոյն գիծին վրայ:

Պրն. Թօփճեանի այս գիրքը՝ «Յօդուածներու ժողովածոյ», երկ-  
րորդն է նոյնանուն գիրքին, որ լոյս տեսած էր 2001-ին:

Այս գիրքին սկիզբը «Երկու խօսք» մը կայ՝ ստորագրութեամբ  
Յակոբ Արք. Գլնճեանի: Սրբազանը հետեւեալը գրած է. «Բ. Թօփճեան  
իւր հեղահամբոյր բնաւորութեամբ, մարդկային բարձր արժանիքներով  
եւ մանաւանդ տարիներու ընթացքին ձեռք բերած իր գրական հարուստ  
վաստակով՝ ծանօթ է շատերուս իբրեւ պրպտուն եւ խորաթափանց մտքի  
տէր անձնաւորութիւն, իբրեւ տալու եւ ուսուցանելու աստուածատուր  
շնորհներով օժտուած մշակ: Ան լիարժէք մտաւորական մըն է ոչ միայն  
իւր մատուցած մշակութային ծառայութեամբ, այլ նաեւ իր ամբողջ  
խառնուածքով ու կենցաղով, իր պարկեշտութեամբ եւ մտաւորականէ  
մը ակնկալուած ուղղամտութեամբ»:

Ինչպէս գիրքին անունը սկիզբէն ցոյց կու տայ, բովանդակու-  
թիւնը յօդուածներ կը մէկտեղէ: Անոնք պարզ, սահուն ոճով գրուած են:

Գիրքը երեք մասեր ունի:

Առաջին մասով պրն. Թօփճեան ամփոփ ներկայացուցած է Հայոց  
քաղաքական, եկեղեցական եւ մշակութային դէմքերէն հոյլ մը: Երկրորդ  
մասին մէջ, կրօնագիտական կարճ ուսումնասիրութիւններով լուսաբա-  
նութիւններ մատուցած է: Իսկ երրորդ մասով, որ «Ի յուշ» անունը ունի,  
մահագրական անդրադարձներով երեք մշակներու մասին խօսած է:

Հայոց քաղաքական, եկեղեցական եւ մշակութային դէմքերուն  
մասին յօդուածները, աճապարող մեր ընկերութեան մէջ, անմիջականօ-  
րէն կարեւոր են: Անոնք ուսումնասիրելու առիթ հունցող Հայ ընթեր-  
ցողին տեղեկութիւններ կու տան: Մեր անցեալը կերտած մարդոց ներդ-  
րումին անդրադառնալու կը հրաւիրեն մեզ:

Ոչ ոք միայն ներկային մէջ կ'ապրի: Անցեալին մասին մեր անծա-  
նօթութիւնը կամ մեր ուրացումը անցեալին՝ ներկան իրատես չեն դարձ-  
ներ: Ու անիրատես ներկայ մը՝ չի կրնար լուսաւոր ապագայ կառուցել:  
Մութին մէջ խարխափողները՝ մութին մէջ ալ կը կորսուին: Պրն. Թօփճ-  
եան իւրաքանչիւր յօդուածով հեզ մոմ մը կը վառէ...

Ներկայացուած դէմքերն են. Խոսրով Բ. Թազաւոր, Վռամշապուհ  
Թազաւոր, Մովսէս Կթղ. Եղիվարդեցի, Սահակդուխտ Միւնեցի, Յովհան-

նէս Վրդ. Տարօնեցի, Գրիգոր Մազիստրոս, Ներսէս Լամբրոնացի, Մինաս Թորնաթեցի, Զաքարիա Քանաքեռցի, Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի, Հ. Ղեւոնդ Ալիշան, Մկրտիչ Կթղ. Խրիմեան եւ Արշակ Տէր Միքէլեան:

Կրօնագիտական յօդուածները կը վերաբերին Աստուածամօր, Յիսուսի անուան, Յիսուսի մարդկութեան մասին Մարկոս աւետարանիչի ըմբռնումին, Յիսուսի զօրութեան՝ իբր գերագոյն բժիշկ, Աստուծոյ անուան, Անոր խօսքին, իմաստութեան, նաեւ Երկինքի արքայութեան ըմբռնումին, ՆԿ-ին մէջ քահանայութեան ըմբռնումին, «Ամէն» բառի իմաստին, Հաղորդութեան, Վարագայ Խաչի տօնին, Մեծ Եղեռնի զոհերու սրբադասման Հարցին, Եհովայի Վկաներու ուրացման Հանգանակին, Նարեկին, Աստուածաշունչ Մատեանին (այս վերջին նիւթով մէկ յօդուած Հայերէն է եւ մէկ յօդուած ալ անգլերէն):

Ի՞նչ բարի պիտի ըլլայ ունենալ ամբողջական շարք մը Հատորներու, որոնք կրօնագիտական բազմազան նիւթեր պարզ կերպով կը լուսաբանեն: Պրն. Թօփճեան ամենայն յաջողութեամբ կրնայ նման Հատորային սկզբունքներ մատուցել հետաքրքիր ընթերցողներուն:

«Ի յուշ»ի մահագրականները կը վերաբերին մեծ եկեղեցական Զարեհ Արք. Ազնաւորեանի, հայագէտ եւ կրթական մշակ՝ Խորէն Գաբրիկեանի եւ հայ մշակոյթին սիրահար ու հասարակական գործիչ՝ Վարուժան Պոյաճեանի:

Զարեհ արքեպիսկոպոս մնայուն կտակով վաստակաւոր մը եղաւ: Ան 20-րդ դարու հայ եկեղեցականութեան վերջին ամենափայլուն քանի մը դէմքերէն էր:

Ափսոսալի է, որ Խորէն Գաբրիկեանէ անտիպներ տակաւին կը մնան: Մեր անտանելի մսխումներուն դիմաց, երբ կը նայինք մշակութային մեր անպատասխանատուութեան, արդեօք չե՞նք տեսներ անկումը: Առանց մշակութային պատասխանատուութեան վերստանձնումին՝ Սփիւռքը պիտի չկարենայ դիմանալ...

Վարուժան Պոյաճեան համամիտ պիտի ըլլար այս հաստատումիս:

Պրն. Բաբգէն Թօփճեան իր այս գիրքին առիթով յոյժ շնորհակտրելի է: Զոհողութիւն մը եւս, որուն համար ան արժանի է սրտազին յիշատակութեան:

ԳՔ

# «UNITY, LIBERTY AND CHARITY, ՄՏՈՐՈՒՄՆԵՐ»

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան

Royal Oak, 2011, լաթակազմ, 160 էջ

Ահաւասիկ շահեկան հատոր մը եւս կ'աւելնայ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Տնօրէն Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեանի գրական վաստակին վրայ:

Հրատարակուած 33րդ գիրքին մեկենասն է Հայկական Ժառանգութեան Յանձնախումբը:

Երկիցուեան հատորը ունի ճոխ ու հարուստ բովանդակութիւն. ան բաժնուած է գլխաւոր երկու մասի:

ա. Անգլերէն գրութիւնները կը կրեն Միութիւն, Ազատութիւն եւ Ողորմածութիւն վերտառութիւնը՝ փոխ առնուած միջնադարեան քրիստոնէական բարոյական մակագիրէն, որ վերագրուած կը նկատուի St. Augustine of Hippo-ի (Յ.Ք. 354-430):

Առաջին մասի անգլերէն բաժինը (էջ 9-114), կը բովանդակէ հետեւեալ խորագիրները.

1. Կրօնական եւ այլ տօներ
2. Հայկական հարցեր
3. Խորհրդածութիւններ
4. Մտահոգութիւններ եւ տենչեր

Վերապատուելի Թութիկեան տարիներու ընթացքին ձեռք բերած հարուստ «կրօնական, մշակութային, ընկերային, հայրենասիրական եւ բարեպաշտական» փորձառութիւններուն եւ իմացութեան մասնակից կը դարձնէ մեզ՝ գրասէր ու ընթերցասէր հասարակութեան հրամցնելով կարգ մը իր խօսած քարոզներէն, քննասիրած նիւթերէն եւ առինքնող խոկումներէն:

Բ. Հեղինակը հատորին երկրորդ մասը անուանած է Մտածումներ, որովհետեւ՝ «Այստեղ երեւցող յօդուածները, քարոզներն ու գրութիւնները մտքիս եւ հոգիիս պրիսմակէն անցած խորհրդածութիւններ են կրօնական եւ ազգային հարցերու շուրջ»:

Հայերէնով շարագրած տասներկու յօդուածներու ընդմէջէն (էջ 117-159), ան անկեղծութեամբ ու պայծառ մտածումով իր տեսակէտներն ու մտահոգութիւնները պարզած է այժմէական կարեւոր կրօնական եւ ազգային հարցերու մասին, որոնք սերտ աղերս ունին համայնական մեր կեանքին մէջ:

«Ես խորապէս կը հաւատամ», կ'ըսէ ան, «որ հայ ժողովուրդը պէտք ունի հոգեմտաւոր արթնութեան եւ մտքի ու հոգիի ներդաշնակութեան: Ան պէտք է շաղախուի իր քրիստոնէական հաւատքի եւ մշա-

կոյթի ակունքներէն ծորող անմահական հոսանուտներով, որպէսզի կարող ըլլայ կերտել իր ներքին ուժականութեան համազօր կեանք մը՝ իր իսկ ինքնուրոյն դիմագիծի ամրապնդման համար:

Ակներեւ է որ ուժերու եւ կարելիութիւններու ցրուածութիւնը, կեդրոնաձիգ եւ համակարգուած գործունէութեանց բացակայութիւնը, ինչպէս նաեւ երբեմնի պատահականութեանց գրուած գործելակերպերը ժխտական անդրադարձ կ'ունենան մեր հաւաքական կեանքին մէջ» (էջ 117-118):

Այս գողտրիկ հատորին բովանդակած յօդուածները գրուած են յստակ լեզուով, պարզ ու սահուն ոճով՝ մեզի ընծայելու հեզասահ ընթերցումի վայելքը:

Գիրքի աւարտին, կարդալով Վեր. Թութիկեանի կենսագրականը, անոր անձին մէջ կը տեսնենք ազնիւ խոհերով ու զգացումներով զօրաւոր հոգեւոր վարիչ մը, մեծ իմացականութիւն ունեցող կրթական դաստիարակ մը եւ Սուրբ Գիրքի ջատագով ու հաւատարիմ պաշտօնեայ մը:

Բ. Թ.



# «ՔԵՄԱՆՉԻՍ ԱՌՌԲԷՆԻ ՅՈՒՇԵՐԸ»

(Ք. տպագրութիւն, Յակոբ Մանուկեան, Թորոնթօ, 2011, 418 էջ, պատկերազարդ)

Այս մեծածաւալ հատորը խնամեալ վերհրատարակութիւնն է 1989ին տպուած նոյնանուն աշխատութեան: Անդրանիկ տպագրութեան բովանդակութիւնը ճշմարտացած է Քեմանչիստ Ռուբէնի մասին «լոյս տեսած բազմաթիւ յօդուածներու, յայտագրերու յաւելումով եւ տարուան 12 ամիսներուն ձօնուած Քեմանչիստի անտիպ երաժշտութենէն մասերով»:

Բժիշկ Թորոս Թորանեան գիրքին Ա. տպագրութեան առթիւ «Արուեստագէտներուն երկրորդ կեանքը» նախաբանին մէջ ըսած է.

«Երախտաշատ գործ մը կատարած է յօրինող երաժիշտ Յակոբ Մանուկեանը, գրի առնելով Քեմանչիստ Ռուբէնի յուշերը: Արդարեւ կարգ մը իրողութիւններ պիտի կորսուէին առ յաւիտ, եթէ Յակոբ Մանուկեան, ժամանակին չձեռնարկէր ժապաւէնի վրայ արձանագրելու ձայնը Քեմանչիստ Ռուբէնի, որ հակառակ իր յառաջացած տարիքին, յորդահոս գետի մը նման վարար, կը պատմէ իր յուշերը...: Ատիկա շահ մըն է հայ երաժշտութեան պատմութեան համար եւ ուղեցոյց մը ապագայ ուսումնասիրողներու, որոնք անպայման պիտի գան զբաղիլ մեր օրերու նուիրեալ աշուղին՝ Քեմանչիստ Ռուբէնի կեանքով...: Իր մահով, Սփիւռքի մէջ ա՛լ աշուղ չի մնաց» (էջ 9-11):

Թերթատելով հատորը եւ անկէ մասեր ընթեռնելով, իրագեկ կը դառնանք հեղինակին իրագործած բազմաձայն աշխատանքին. ան երաժշտագէտի խոր համոզումով, տարիներու ընթացքին ի մի հաւաքած է լրագիրներու մէջ տարտղնուած Քեմանչիստ Ռուբէնի անձին ու արուեստի մասին քննական յօդուածները այլեւայլ քաղաքներու մէջ նուագածութեան աւարտին: Նաեւ, ան յատուկ բծախնդրութեամբ Քեմանչիստի բերնէն վկայագրած է անոր անձնական կեանքէն դրուագներ:

«Յառաջ»ի մէջ (Նոյ. 1936), Հայկ Թիւրքեան գրած է. «Քեմանչիստ Ռուբէն տաղանդաւոր նուագահար մըն է, որ կը յօրինէ եւ կը ձայնագրէ: Այլ երգահաններու ստեղծագործութիւնները կուտայ քեմանչէի, դաշնակի եւ ամէն տեսակ նուագարաններու համար: Ուրեմն Ռուբէնը միայն արեւելեան նուագի վարպետ չէ, այլ արուեստագէտ մը եւրոպական իմաստով...»:

Հայ արուեստագէտ աշուղը կը թափառի երկրէ երկիր հայ երգի, հայ մշակոյթի քարոզութեան նպատակով...եւ ամէն տեղ յարգանքի արժանացած է. տեղական մեծ թերթերը հիացմունքով արտայայտուած են թէ՛ իր արուեստի եւ թէ՛ հայ երաժշտութեան, մշակոյթի եւ ափսոսանքով հայ ազգի սեւ ճակատագրի մասին» (էջ 53):

Ըստ «Ազգակ»ի (Սեպտ. 1930), «Վակների երաժշտութեամբ ստեղծեցինք համագերմանական միութիւնը», կ'ըսէ Պիզմարք՝ կանաչ սե-

ղաններու գայլը: Պատերազմէն առաջ Կոմիտասն էր ստեղծած համայն-հայկական գեղեցիկ կապը, իր անմեռ գեղջուկ երգերով: Այսօր Ռուբէնն է որ նոյն նպատակին համար կը շրջի ծովէ-ծով. հայը հայ կը փնտռէ, իր քեմէնչով անոր սրտին հայրենի կարօտը երգելու, Արարատը երգելու, եւ կապելու բոլոր հայ սրտերը անխտիր գեղեցիկ խաչեալին՝ Հայաստանին» (էջ 45):

Աշխարհի չորս կողմ կատարած տարիներու շրջապտոյտներու ընթացքին Քեմանչիստ Ռուբէն տեսակցութիւններ ու հարցազրոյցներ ունեցած է հայ թէ օտար թղթակիցներու հետ: Ան հանդիպումներ ունեցած է նաեւ հայ արուեստագէտներու, գրողներու, մտաւորականներու եւ եկեղեցականներու հետ, ինչպէս՝ Յովհ. Թումանեան, Արշակ Զօպանեան, Աւետիս Ահարոնեան, Նիկոլ Աղբալեան, Վահրամ Փափազեան, Լեւոն Շանթ, Շաւարշ Նարդուհի, Յովհ. Շիրազ, Պարոյր Սեւակ, Սիլվա Կապուտիկեան, Արամ Խաչատուրեան, Շարա Տալեան, Գասպար Իփէքեան, Նշան Պէշիկթաշլեան, Վազգէն Ա., Կոմիտաս վրդ., Գարեգին Արք. Խաչատուրեան, Պետրոս կթղ. Սարաճեան, Թորգոմ Արք. Գուշակեան, Հ. Ներսէս Ակինեան. յիշելու համար անունները կարգ մը երեւելի անձնաւորութիւններու:

Հաճոյքով կը կարգացուին Քեմանչիստ Ռուբէնի պատմուածքները «Հակիրճ տեղեկութիւններ կարգ մը շրջագայութիւններէն, Ռուբէնեան ժպիտներ, տեղական ըմբռնումներ, դէմքեր, յուշարան-յուշարձան», որոնք ներփակուած են հատորին 234-320 էջերուն մէջ:

Տաղանդաւոր Քեմանչիստ Ռուբէն Գարախանեան ծնած է 1895ին Թիֆլիսի մօտ Շուլավիւր հայաբնակ քաղաքը: Իր բնիկ ղարաբաղցի հայրը՝ Գէորգ, ու մեծ հայրը՝ Ռուբէն, որ ծանօթ է աշուղ Սանամ Նաւասի անունով, նոյնպէս քեմանչիստներ եղած են ու խոր ազդեցութիւն ունեցած պատանի Ռուբէնի կեանքին վրայ: Ան վախճանած է 1983ին:

Ռուբէն իր կեանքի իմաստաւորումը շարադրած է հետեւեալ հինգ տողերով.

Ռուբէնն եմ ես Քեմանչիստ,  
Թափառում եմ աշխարհում,  
Եղբայրութեան հուրը սրտիս,  
Խաղաղութեան երգը շուրթիս:  
Սէր օրեր եմ ձեզ բաշխում:

Աշուղական քնարերգութեան պատմութեան ուսումնասիրութեան համար կարեւոր նպաստ մըն է երգահան եւ արձակագիր Յակոբ Մանուկեանի «Քեմանչիստ Ռուբէնի յուշերը» հատորին վերհրատարակութիւնը: Գնահատութեամբ շնորհակալ ենք իր այս շահեկան աշխատասիրութեան համար:

Բ. Թ.

# «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»

(պատմուածքներ, Գրիգոր Հոթոյեան, Թորոնթօ, 2011, 302 էջ)

Հրապարակի վրայ է Գրիգոր Հոթոյեանի «Անցեալի յուշերով կ'ապրինք» խորագրեալ հատորը: Ան գիրքին անուանումը փոխ առած է Բարսեղ Կանաչեանի մէկ խօսքէն: Օր մը, Հոթոյեան Կանաչեանին որպիսութիւնը հարցնելուն՝ ստացած է հետեւեալ պատասխանը. «Տղաս, ի՞նչպէս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»:

Գրիգոր Հոթոյեանի այս լոյս տեսած հատորը ձօնուած է՝

«Սասունի Տալլորիկ շրջանի Սպաղանք գիւղը ծնած, հայ յեղափոխական եւ Ֆետայական շարժման հերոսներ Մակարի, Գալէի եւ Ակէի ազգական եւ զինակից հօրս՝ Ղազար (Խարգօ) Հոթոյեանին՝ սիրով եւ որդիական ոգեշունչ զգացումներով»:

«Անցեալի յուշերով կ'ապրինք» հատորին մէջ ամփոփուած 47 պատմուածքները նախապէս հրատարակուած են Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ: Հատորին տպագրութեան ծախսը ստանձնած է Անի Հոթոյեան ամուլի ընտանիքը:

Գերպ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանի հաստատումով. «Գրիգոր Հոթոյեան կոչուած այս մարդը, երեւակայական ստեղծագործութիւններով չէ որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ՝ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով... Ան իր գրականութիւնը մշակած է առանց գրագէտ ըլլալու յաւակնութեամբ... էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը զորս ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնց, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ու հոգի ունին»:

Հատորին բովանդակած բոլոր պատմուածքներն ալ շնորհքով ներկայացուած են: Այդ յուշապատումներու դէմքերն ու դէպքերը իրական պատահած եղելութիւններ են՝ շարադրուած ականատեսի վկայութեամբ: Ընթեռնելով զանոնք կը գիտակցինք, որ պր. Հոթոյեան, իբր նախկին ուսուցիչ-տնօրէն, իր գրութիւններով տակաւին կը շարունակէ մեզ կրթել իր հաւատացած եւ ընդգրկած կրօնական, ազգային ու հայրենասիրական բարձր ու վսեմ արժէքներով: Անոր բարելիք մտահոգութիւնն է դաստիարակել ու բացայայտել քրիստոնէական բարոյականի, մարդկայնութեան ու իմաստութեամբ ապրուած կեանքի գաղտնիքները, որպէսզի այս աշխարհի մէջ իսկ ունենանք «առուել կեանք»ը:

Պատմուածքներու ընթերցումը հեզասահ կ'ընթանայ որովհետեւ հեղինակին ոճը պարզ է ու լեզուն՝ հաղորդական: Այլազան պատմումներու ընդմէջէն կարդացողին կ'ընծայուին հաճելի ու շահեկան պահեր: Մարդկային նկարագրի ինքնուրոյնութեան ծանօթացումին ու մեկնութեան համար կ'արժէ կարգալ հատորը՝ օգտուելու եւ անձնական կեանքի մէջ կիրառելու Գրիգոր Հոթոյեանի բանիմաց եւ իրատես պատմուածքներէն:

Բ. Թ.